Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

1803

Ս. Խ. Հ. Ժ. Տ. Կ. Խ.

10 AUG 2006

ԿԱԴՐԵՐԻ ՍԵԿՏՈՐ

ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱԶԱ

Տ. ՎԱՆՅԱՆ

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 2 – 3

ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԻՆԴՈՒՍՏՐԻԱԼ ՏԵԽՆԻԿՈՒՄ

# ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

I.

## ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄՆ ԻԲՐԵՎ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՅԵՎ ՎԵՐՋԻՆ ՇՐՋԱՆԸ

II.

## ԱՆԳԼԻԱՆ՝ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ՇՐՋԱՆՈՒՄ

ՊՐԱԿ Բ.

ՅԵՐԿՐՈՐԴ ԿՈՆՑԵՆՏՐ

9(4)
Վ-22

ՅԵՐԵՎԱՆ 1931

08.08.2013

1803

Ծանոթություն.—Առաջադրությունները կազմված են Լուսժողկոմատի կողմից հանձնարարված նոր ծրագրերի համաձայն, վորը միատեսակ է բոլոր մասնագիտական տեխնիկումների համար, բացի մանկավարժական տեխնիկումներից, վորոնց ծրագիրն առանձին է։ Ըստ վորում, առաջադրությունները կարող են ոգտագործել նաև վոչ հեռակա մասնագիտական տեխնիկումների Ս. կուրսերը, ուր վոր ուսման պլանով նախատեսված է «դասակարգային պայքարի պատմություն» առարկան։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԽՍՀ–Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

22959-59

ԳԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ

Պատվեր № 2367. Գրատեսչլիազոր 6471 (բ). Տիրաժ 900

30 MAY 2011

9(4)
Կ-22

## ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 2

# ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԸ, ՎՈՐՊԵՍ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՅԵՎ ՎԵՐՋԻՆ ԵՏԱՊԸ

### (ՆԵՐԱԾԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ)

19-րդ դարի յերկրորդ կեսը և 20-րդ դարի ժամանակաշրջանը կապիտալիստական յերկրների համար հանդիսանում է կապիտալիզմի զարգացման մի նոր փուլ, վոր իմպերիալիստական անունն ստացավ։ Կապիտալիզմն այս փուլին հասավ նախորդ շրջանում կատարած վիթխարի զարգացման հետևանքով։

Արևմտյան Յեվրոպայում արդյունաբերական կապիտալիզմին հատուկ «ազատ մրցման» սահմանակետը ընդհանուր առմամբ հանդիսանում է 70-ական թվականները, վորից դեն շարժումը կանգ առավ. իսկ 80-ական թվականների վերջից, 90-ական թվականների սկզբից արդեն կապիտալիզմը թևակոխեց իր զարգացման նորագույն ետապը։ Կապիտալիզմի այս նորագույն ետապի բնորոշ առանձնահատկություններն են՝

ա) կապիտալի և արտադրության կոնցենտրացիա, վորը ազատ մրցումը փոխարինում է մոնոպոլիայով։

բ) կապիտալիստների միջազգային մոնոպոլիստական համախմբումներ.

գ) բանկային և արդյունաբերական կապիտալների ձուլումը, վորը բնորոշվում է վորպես ֆինանսական կապիտալ.

դ) կապիտալի արտահանումն իբրև սիստեմ.

ե) աշխարհի վերաբաժանումը առաջավոր կապիտալիստական յերկրների միջև և վերջապես.

զ) վորպես այդ ամենի հետևանք սպառազինումների ուժեղացում, միլիտարիզմ, մարինիզմ և համաշխարհային պատերազմներ։

Համաշխարհային կապիտալիստական արտադրության արագատեմպ զարգացումը անչափ արագացրեց արտադրողական ուժերի վերելքը և փոխեց տարբեր յերկրների կապիտալիստական սիստեմի մեջ գրաված դիրքը. Գերմանիան, Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգները, Ռուսաստանը և այլ յերկրներ արագացրած տեմպերով սկսեցին բաց թողած ժամանակի տեղը հանել, իսկ մի քանիսը, ինչպես որինակ Գերմանիան վոչ միայն հասավ, այլև սկսեց առաջ ընկնել։ Զտեսնված չափերի համակենտրոնացում կատարվեց վերջապես նաև ցարական Ռուսաստանում։ Յեվրոպական յերկրների զարգացման տեմպը ցույց տալու համար վերցնենք համաշխարհային կապիտալիստական արտադրության մի քանի ճյուղերը, առանձնապես իբրև լավագույն որինակ չուգունի արդյունաբերությունը հազար տոններով.

| Տարիներ | Գերմանիա, | Ֆրանսիա, | Բելգիա, | Անգլիա, | Գումարը |
|---|---|---|---|---|---|
| 1892 | 4,928 հ. տ. | 2,058 հ. տ. | 753 հ. տ. | 6,709 հ. տ. | 14,338 հ. տ. |
| 1902 | 8,815 » | 2,405 » | 1,069 » | 8,860 » | 21,149 » |
| 1912 | 17,617 » | 4,939 » | 2,301 » | 8,751 » | 33,608 » |

*Իսկ ածխի համաշխարհային արդյունաբերությունը 1885 թվի 448 միլ. տոննից 1913 թվին բարձրացավ մինչև 1·300 միլ. տոննի. այսինքն աճում ավելի գրեթե 400 տոկոսով: Նույն մասշտաբով յերկաթուղային ցանցի աճումը տալիս է հետևյալ պատկերը—*

1885 *թ.* 487,343 *կիլոմետրից աճումը հասնում է մինչև* 1·057,899 *կիլոմետրի և վերջապես համաշխարհային արտաքին առևտուրը* 1880 *թվից մինչև* 1912 *թիվը* 28·707 *միլիարդ մարկից հասնում է* 78·296 *միլիարդ մարկի:*

*Աճման և մրցակցական այս պայքարում, ինչպես ասացինք, առանձին տեղ է գրավում հատկապես Գերմանիան, ուր ընդամենը յերկու և կես տասնամյակում կատարվեց խոշոր համակենտրոնացում: Այսպես, օրինակ՝ խոշոր ձեռնարկությունների թիվը, վորը* 1882 *թ. կազմում էր* 9 *հազար,* 1895 *թ.* 18 *հազար,* 1907*-ին հասավ* 29 *հազարի: Նույն աճումը նկատելի յե քարածխի, յերկաթի հանքի և բանկային կապիտալի համակենտրոնացման մեջ:*

*Զարգացման այս տեմպերն և արտադրության համակենտրոնացման այս պրոցեսներն ահա արդյունաբերական կապիտալը վերածեցին ֆինանսական կապիտալի:*

## 1. Արտադրության համակենտրոնացումը յեվ մոնոպոլիան

*Արդյունաբերության վիթխարի աճումը ու բոլոր ավելի խոշոր ձեռնարկությունների մեջ արտադրության կենտրոնացման չափ արագ կատարվող պրոցեսը կապիտալիզմի ամենաբնորոշ առանձնահատկություններից մեկն է հանդիսանում:*

*Համակենտրոնացման այս պրոցեսը կարելի յե դիտել դեռ* 19*-րդ դարի* 2*-րդ կեսի սկզբներից: Կարելի յե նույնիսկ* 1860 *թ. առաջ յեղած դարաշրջանից կապիտալիստական մոնոպոլիաների առանձին օրինակներ բերել: Այդ ժամանակաշրջանից կարելի յե հայտնաբերել սաղմերը կապիտալիզմի բարձրագույն ձևի, այն է՝* իմպերիալիզմի*: Սակայն այդ բոլորը ֆինանսական կապիտալի միայն նախապատմական շրջանն է հանդիսանում:*

*Արդի մոնոպոլիաների իսկական սկիզբն ամենից շատ կարելի յե հաշվել* 1860 *թվականների մոտերքը:*

*Մոնոպոլիաների զարգացման իսկական ժամանակաշրջանը սկսվում է* 1870*-ական թվականներից և տևում մինչև* 1890*-ական թվականների սկիզբը. իսկ յեվրոպական մասշտաբով ազատ մրցման սահմանակետը հանդիսանում են* 60–70*-ական թվականները: Այդ այն ժամանակ էր, յերբ Անգլիան ավարտել էր հին ձևի իր կապիտալիստական կազմակերպության կառուցումը, իսկ Գերմանիայում այս կազմակերպությունը վճռական կռվի մտավ ընդդեմ արհեստի ու տնային արդյունաբերության և ստեղծեց գոյության իր նոր ձևերը:*

*Արդեն* 1890 *թ. սկզբին խոշոր կարտելները, ի դեմս կոկսի սինդիկատի կազմակերպության, վորի օրինակով ստեղծվեց նույնպես ածխային սին-*



*դիկատը, մշակեցին կարտելային այնպիսի տեխնիկա, վորից ղենը նյապես շարժումը չգնաց:*

*Այսպիսով մենք կարող ենք վորոշել մոնոպոլիաների պատմության հիմնական ետապները.*—1) 1860*-ից* 70*-ական թվականները հանդիսանում են ազատ մրցման զարգացման ծայրագույն աստիճանը: Այս այն շրջանն է, յերբ, ինչպես ասացինք, յերևում են մոնոպոլիաների հազիվ նկատելի սաղմերը միայն.* 2) 1873 *թ. կրիզիսից հետո կարտելների զարգացման մի լայն շերտ, սակայն այս կարտելները դեռ բացառություն են, դեռ հաստատուն վիճակ չունեն,* 3) 19*-րդ դարի վերջերքի վերելքն ու* 1900–1903 *թվերի կրիզիսը, յերբ կարտելները դառնում են արդեն տնտեսական կյանքի հիմքերից մեկը: Այս շրջանումն է, «վոր կապիտալիզմը վերածվեց իմպերիալիզմի»* (*Լենին*):

*Նորագույն մենաշնորհյա կապիտալիզմի կազմակերպությունները գործադրում են կռվի և կազմակերպական հետևյալ մեթոդները.* 1) *ուրիշներին հում նյութերից զրկելը, վորով հարկադրում են վերջիններին կարտելների մեջ մտնելու,* 2) *իրենց «միությունների» միջոցով բանվորական ձեռքերից զրկելը (այսինքն այն պայմանագրերի միջոցով, վոր կապիտալիստները կնքում են բանվորական միությունների հետ, վորպեսզի վերջիններս աշխատեն միայն կարտելացրած ձեռնարկություններում),* 3) *նրանց վորևե պլատույք հասցնելու փոխադրությունից զրկելը,* 4) *վաճառքից զրկելը,* 5) *գնորդի հետ պայմանագիր կնքելը, վոր սա առևտրական հարաբերություն ունենա բացառապես կարտելների հետ,* 6) *գները պլանաչափորեն գցելը այն նպատակով, վոր սնանկանան «կողմնակիցները», այսինքն մոնոպոլիային չենթարկվող ձեռնարկությունները. միլիոններ են ծախսվում այն բանի վրա, վոր մի վորոշ ժամանակ ապրանքն ինքնարժեքից ցած ծախեն.* 7) *վարկ տալուց զրկելը,* 8) *բոյկոտ հայտարարելը:*

*Պետք է նկատել, վոր մոնոպոլիաները կարող են առաջ գալ նույնիսկ արդյունաբերության այնպիսի ճյուղերում, վորտեղ հում նյութի աղբյուրների գրավումը հնարավոր չէ (օրինակ ցեմենտի արդյունաբերության մեջ): Այսպիսով մոնոպոլիստները կարտելացրած կազմակերպություններով ամում են բոլոր նրանց, ովքեր չեն յենթարկվում իրենց կամքին և քմահաճույքին: Թեև այս շրջանումն էլ վողջ տնտեսության հիմքը համարվում է ապրանքային արտադրությունը, սակայն փաստապես ապրանքային այս տնտեսությունը խարխլվել է և գլխավոր վաստակները բաժին են ընկնում խոշոր ֆինանսիստներին:*

ԿԱՐՏԵԼՆԵՐԸ ՃԳՆԱԺԱՄԵՐԸ ՉԵՆ ՎԵՐԱՑՆՈՒՄ.—*Ընդհակառակը, արդյունաբերության մի շարք ճյուղերում առաջ յեկած մոնոպոլիան սաստկացնում և սրում է կապիտալիստական քաոսը, վոր հատուկ է ամբողջ կապիտալիստական արդյունաբերության, վերցրած ընդհանուր առմամբ:*

*Կապիտալիզմի բնորոշ կողմերից մեկն էլ այն է, վոր հողագործության և արդյունաբերության զարգացման միջև գոյություն ունի* անհամապատասխանություն*: Այս անհամապատասխանությունը մոնոպոլիաների շրջանում ավելի քան մեծանում է: Թռիչքային ձևով զարգացող կապիտալիզմը հարձակվում է գյուղատնտեսության վրա, գավթում մանր տնտեսություններին, «կլորացնում» նրա տնտեսությունը և յենթարկում համակենտրոնացման, կապելով արտադրության այդ ճյուղը ևս իրա հետ: Այսպիսով արտոնյալ*

վիճակում յեղող ծանր արդյունաբերությունն առաջ է բերում արդյունաբերության մյուս ճյուղերումն էլ համապատասխան խախտումներ: Ցնդում է մանր սեփականատեր գյուղացու այն հույսը, թե նա յերբևէ ի վիճակի յե կապիտալիզմի պայմաններում իր տնտեսական անկախությունը պահպանել: Գյուղացիական հիմնական մասսաներն անընդհատ տրորվելով կապիտալիզմի կողմից, դառնում են վարձու բանվորական բանակի անդամներ, իսկ մյուս մասը վարձվում է հենց գյուղատնտեսության մեջ աշխատելու:

## 2 Ակցիոներական ընկերություններ

Համակենտրոնացման և կենտրոնացման դուգընթաց, հանդես են գալիս կազմակերպության նոր ձևեր, վորոնք առաջ չկային: Կանգ առնենք այդ ձեռնարկություններից մեկի, այն է՝ ակցիոներական ընկերությունների վրա:

Ի՞նչ է ներկայացնում իրենից ձեռնարկությունների ակցիոներական ձևը:

Անհատական ձեռնարկությունների հետ միասին, վորտեղ տեր է հանդիսանում միայն մի կապիտալիստ, կապիտալիստական հասարակության մեջ գոյություն ունեն նաև այնպիսի ձեռնարկություններ, վորոնք կազմակերպված են «ընկերական» հիմունքներով, վորտեղ մի քանի կապիտալիստներ են մասնակցում: Այդպիսի ընկերովի ձեռնարկությունները լինում են՝ 1) լիակատար ընկերություն, 2) կոմանդիտ կամ վստահության վրա հիմնված ընկերություն և 3) ակցիոներական ընկերություն: Ի տարբերություն մյուս ընկերությունների ակց. ընկերությունների բոլոր անդամները պատասխանատու յեն միայն այն գումարներով, վոր նրանք դրել են այսպես կոչված ակցիաների մեջ:

Ընկերության կապիտալը կազմվում է առանձին կապիտալիստների փայական մուծումներից, վորոնք միասին մի վորևէ ձեռնարկություն—ֆաբրիկա, բանկ և այլն են հիմնում: Առանձին կապիտալիստների մուծած փայերը կարող են միահավասար լինել, մինչդեռ փայատիրոջ ձեռք բերած իրավունքը ձեռնարկության գույքի, նրա շահույթի վրա և այլն, վորոշվում է նրա մուծած փայի չափով. այն կապիտալիստը, վոր մուծել է ամբողջ կապիտալի կեսը, իրավունք ունի շահույթի կեսի վրա և այլն: Մուծած դրամի փոխարեն յուրաքանչյուր փայատեր ստանում է վորոշ քանակությամբ վկայագիր կամ ապահովաթուղթ, վորոնք նրան իրավունք են տալիս մասնակցություն ունենալու ձեռնարկության և նրա շահույթների մեջ: Այդ վկայագիրը կրում է ակցիա (բաժնետոմս) անունը: Ակց. ընկերության այդ ձևով կազմված ամբողջ կապիտալը բաժանվում է հավասար քանակությամբ բաժիններ, յուրաքանչյուր բաժինն համապատասխանում է մի ակցիա. յեթե ակց. ընկերության ամբողջ կապիտալը հավասար է 50 հազար ռուբլու և այն բաժանվում է հազար ակցիայի, ապա ամեն մի 50 ռ. մուծող անձն ստանում է մեկ ակցիայի իրավունք՝ ձեռնարկության բոլոր շահույթների մի հազարերորդական մասի վրա, իսկ այն անձը, վոր ասենք թե մուծում է ակցիոներական ամբողջ կապիտալի կեսը (այսինքն 25,000 ռ.), կստանա հինգ հարյուր ակցիա և այլն: Ձեռնարկության վիճակը վորոշելիս ակց. ընկերության վարչության, վարչական պաշտոնյաների ընտրության ժամանակ և այլն ակցիոներներից (ակցիաներ—բաժնետոմսեր ունեցող անձերը) յուրաքանչյուրը բոլոր ակցիոներների (բաժնետերերի) ընդհանուր ժողովում այնքան ձայն ունի, վորքան ակցիա ունի ինքը:



Ակցիաներ ունեցող անձը կարող է վերավաճառել այդ ակցիաները:

Այն դեպքում, յերբ վորևէ մի բաժնետեր (ակցիոներ) վաճառում է իր բաժնետոմսերը (ակցիաները) մի ուրիշ անձի (բոլորը կամ մի մասը), բաժնետոմսերի տիրապետության հետ կապված բոլոր իրավունքներն անցնում են այդ անձին:

Ակց. ընկերությունը, ինչպես յուրաքանչյուր այլ ձեռնարկություն, կարող է, բացի իր սեփական կապիտալներից, ժամանակավորապես ոգտագործել այն դրամական գումարները, վոր նա ստանում է իբրև վարկ: Ակց. ընկերությունը կարող է վարկով ոգտվել նմանապես ոբլիգացիաներ կոչվող արժեթղթեր բաց թողնելու միջոցով: Ոբլիգացիան մի վկայագիր է, վոր վկայում է փոխառության ստացման փաստը և պարտավորություն է բովանդակում վճարելու ներկայացնողին վորոշ տոկոսներ փոխառության համար և վորոշ ժամկետից հետո պարտք վերցրած գումարը վերադարձնել: Ոբլիգացիան տարբերվում է ակցիայից նրանով, վոր նա իր տիրոջը ակց. ընկերության սեփականատեր չի դարձնում և նրան ձայնի իրավունք չի տալիս ակցիոներների ժողովում:

Բացի բոլոր ասածներից, ձեռնարկությունների ակցիոներական ձևի տարածման համար մեծ նշանակություն ունի նաև նրա անկախությունը ձեռնարկողի անձնավորությունից: Հասկանալի յե, վոր ակցիոներ. ձեռնարկությունները, իբրև խոշոր, հսկայական կապիտալներ ունեցող ձեռնարկություններ, ունեն այն բոլոր առավելությունները, վոր առհասարակ ունենում է խոշոր արտադրությունը մանրի հանդեպ:

«Աշխարհը մինչև այժմ առանց յերկաթուղիների կմնար—ասում է Մարքսը,—յեթե պետք լիներ սպասելու, մինչև վոր կուտակումը մի քանի առանձին կապիտալիստների այնպիսի ջանքերի հասցներ, վոր նրանք ի վիճակի լինեյին յերկաթուղի կառուցել: Ընդհակառակը կենտրոնացումը, ակցիոներական ընկերությունների միջև հասավ դրան կարծես ձեռքի մի շարժումով»:

Ակցիոներական ընկերություններին կարելի յե հանդիպել կապիտալի զարգացման բոլոր աստիճաններում: Սակայն նրանց ծաղկումը վերջին շրջանում առանձնապես ուժեղ թափ է կրում:

Իրապես ակցիոներական ընկերության մեջ իշխանությունը պատկանում է ամենից ավելի հարուստ ակցիոներներին, վորոնք ամենից ավելի խոշոր փայեր են ներմուծել: Այսպիսով ակցիոներական ընկերությունները հզոր գործիք են դառնում ամբողջ հասարակական կապիտալը խոշոր կապիտալիստների մի փոքրիկ խմբակի ձեռքում կենտրոնացնելու համար: Այս կենտրոնացումն ավելի քան ուժեղանում է և աճում, յերբ մի ակցիոներական ընկերություն մասնակցություն է ունենում մի ուրիշ ակցիոներ. ընկերության մեջ և վերջինիս յենթարկում իր ազդեցությանը: Հետագա դասերի ուսումնասիրության թողնելով ակց. ձեռնարկությունների հետ կապված դիվիդենդի և ակցիաների կուրսի, ֆիկտիվ կապիտալի և հիմնադրման շահույթի խնդիրները, մատնանշենք միայն, վոր սակավաթիվ թվով կապիտալիստներ տիրանալով ակցիաների, հնարավորություն են ձեռք բերում հիմնադիր լինել, հիմնադրական շահույթ ստանալ, առանց մատը մատին խփելու, առանց անգամ իմանալու այդ ձեռնարկության գործերն ու տեղը: Գործի ամբողջ տեխնիկական կողմը հանձնելով վարձու աշխատավորներին, իրենք ակցիաների տերերը դառնում են պարազիտներ և զբաղվում են ակցիաներ գնելով և առնելով, դիվիդենդներ ստանալով:

## 3. Մոնոպոլիստական միավորումների ձևերը

Մոնոպոլիստական միավորության ամենատարրական ձևը հանդիսանում է կարտելը: Կարտելը միատեսակ ձեռնարկություններ ունեցող կապիտալիստների ժամանակավոր համաձայնություն է, վոր գլխավորապես նպատակ ունի իր մասնակիցների միջև բաժանելու վաճառահանման շրջանները և սահմանելու նվազագույն գները, վորից ցած համաձայնության մասնակիցները պարտավորվում են ապրանքները չվաճառել: Սակայն կարտելը իր կազմակերպական ձևով հաստատուն յերաշխիք չի տալիս, թե բոլոր դեպքերում հնարավոր է համաձայնության իրագործումը: Նրանք քիչ թե շատ հաստատուն են լինում միայն անփոփոխ կոնյունկտուրայի ժամանակ, յերբ հաճախակի չեն դառնում գների տատանումները, վաճառքի անկայունությունը և այլն: Կարտելների վոչ հաստատուն վիճակը կապիտալիստներին մղում է դեպի ավելի հաստատուն միավորումների անհրաժեշտությունը:

ՍԻՆԴԻԿԱՏ—ՏՐԵՍՏ, ԿՈՆՑԵՐՆՆԵՐ.— Սինդիկատը կապիտալիստների մի այնպիսի միավորություն է, վորի ժամանակ նրա մեջ մտնող ձեռնարկությունները կորցնում են իրենց վաճառականական ինքնուրույնությունը: Այստեղ, կապիտալիստներից յուրաքանչյուրը իր ինքնուրույնությունը պահպանում է միայն ապրանքների արտադրության ասպարեզում: Իսկ ապրանքի վաճառքը (յերբեմն նաև հումքի գնումը) կատարվում է հատուկ կազմակերպության միջոցով, վորին պարտավոր են հանձնել իրենց ամբողջ արտադրանքը միավորված բոլոր կապիտալիստները:

Այս կազմակերպությունը սովորաբար կառուցվում է ակցիոներական սկզբունքներով. ակցիաները բաշխվում են հենց իրենց համաձայնության յեկածների միջև:

Սինդիկատն ավելի հաստատուն յերաշխիքներ է տալիս, սակայն նա նույնպես չի կարող լիակատար կերպով վոչնչացնել մրցությունն իր մեջ մտնող ձեռնարկությունների միջև, յերբ յուրաքանչյուր ձեռնարկություն աշխատում է վաճառահանվող ապրանքների մեջ իր բաժինն ավելացնել տալ:

Այս առանձնապես յերևում է այն ժամանակ, յերբ սինդիկատին հաջողվում է ավելի շահավետ վաճառքի գներ ձեռք բերել իր ապրանքների համար. այդ ժամանակ սինդիկատի մեջ մտած կապիտալիստներից ամեն մեկը ձգտում է շուկա հանել վորքան կարելի յե շատ ապրանք, մինչդեռ սինդիկատը սրա մեջ շահագրգռված չէ, վորովհետև դա գների իջեցում է առաջ բերում:

ՏՐԵՍՏ.—Տրեստը այս տեսակետից հենց այնպիսի մի միավորություն է ներկայացնում, վորի ժամանակ նրա մեջ մտնող ձեռնարկությունները զրկվում են վոչ միայն վաճառականական այլև տնտեսական ինքնուրույնությունից: Տրեստի մեջ միավորված կապիտալիստները կորցնում են իրենց ձեռնարկությունների նկատմամբ ունեցած անհատական սեփականության իրավունքը և հանդիսանում են տրեստի միավորված գույքի սեփականակից: Տրեստը սովորաբար կազմակերպվում է ակցիոներական ընկերության ձևով: Տրեստի հիմնական առավելությունն այն է, վոր նա բոլորովին վոչնչացնում է մրցությունը իր մեջ մտած ձեռնարկությունների միջև:

Բայց տրեստը վերացնում է միայն մրցությունը միատեսակ ձեռնարկությունների միջև, որինակ՝ տրակտորներ արտադրող և մի այլ ձեռնարկության միջև, վոր նույնպես մեքենաներ է արտադրում: Մինչդեռ, բացի միատեսակ ձեռնարկությունների միջև տեղի ունեցող մրցումից, մրցություն տեղի յեն ունենում տարբեր ճյուղերի միջև, վորպիսի պայմաններում յերկու կողմերն էլ կարող են հավասարաչափ մնացել ցածր և բարձր գներից:

Վերջին հանգամանքը կապիտալիստներին մղում է դեպի կոմբինատների ստեղծումը, վորոնք իրենց մեջ հավաքում են բազմատեսակ ձեռնարկություններ:

«Կոմբինատը մի ձեռնարկության մեջ արդյունաբերության զանազան ճյուղերը միացնելն է, այնպիսի ճյուղեր, վորոնք հում մշակման հաջորդական աստիճաններն են ներկայացնում (որինակ՝ «հանքանյութից» չուգուն հանելը և չուգունը պողպատի վերածելը»)» (Լենին): Իբրև կոմբինացիայի յենթարկված հատուկ ձև պետք է մատնանշել կոնցերնները:

«Կոնցերն ասելով հասկացվում է զանազան տեսակի ձեռնարկությունների այնպիսի միավորություն խոշոր մասշտաբով, յերբ վորոշ ձեռնարկություններ յենթարկում են իրենց մյուս ձեռնարկությունները՝ նրանց ֆինանսավորելու, նրանց ակցիաների մի մասը գնելու, «իրենց» մարդկանց այդ ձեռնարկությունների ղեկավար մարմիններն ուղարկելու և նրանց «դուստր» ու «թոռ» ձեռնարկությունների վերածելու միջոցով: Կոնցերնի գլուխը սովորաբար կանգնած է լինում մի վորևէ խոշոր արդյունաբերող, վորը կարող է ահագին քանակությամբ ձեռնարկություններ իր ազդեցությանը յենթարկել»:

Ներկայումս կոնցերնները տարածված են առավելապես Գերմանիայում, բայց, Գերմանիայի հետ մեկտեղ, նրանց կարելի յե հանդիպել Ֆրանսիայում, Իտալիայում, Ավստրիայում և այլ յերկրներում:

## 4. Բանկերն ու նրանց նոր դերը

Բանկերը, վորոնք սկզբնական շրջանում պարզ միջնորդական ռոլի դեր եյին կատարում,—դրամական ազատ մնացած կապիտալը մտցնում շրջանառության մեջ,—այժմ՝ այն դարձնում փաստակ բերող կապիտալ, հավաքելով ամեն տեսակի ու բոլոր դրամական հասույթները և տրամադրելով այդպիսիք կապիտալիստներին, 20-րդ դարի սկզբին յենթարկվում են կապիտալիստական մենաշնորհին:

«Բանի զարգանում է բանկային գործը և համակենտրոնանում սակավաթիվ հիմնարկներում, բանկերն իրենց միջնորդի դերից դառնում են հզոր մոնոպոլիստներ, վորոնք ազատ կերպով տնօրինում են թե տվյալ յերկրի և թե մի ամբողջ շարք այլ յերկրների բոլոր կապիտալիստների ու մանր տնտեսատերերի ամբողջ կապիտալի բախտը, այլ և արտադրության միջոցների, ինչպես նաև հում նյութերի աղբյուրների մեծ մասի բախտը: Նախկին սակավաթիվ համեստ միջնորդների դեր կատարող բանկերը դառնում են մոնոպոլիստներ: Այս յերևույթը այն հիմնական պրոցեսներից մեկն է, վորոնք կապիտալիզմը դարձնում են կապիտալիստական իմպերիալիզմ» (Լենին):

«Բանկերի այս խոշորացման պրոցեսում վերջիններս վոչ միայն ուղղակի կուլ են տալիս մանրերին, այլ և սրանց «միացնում են» իրենց, յենթարկում են իրենց, մտցնում «իր» խմբի մեջ, իրենց կոնցերնի մեջ և այլն» (Լենին):

«Արտադրության միջոցների ընդհանուր բաշխումը»,—ահա թե զարգացման տեսակետից ինչ է անում արդի բանկերից, վորոնք Յեվրոպայի

կարևորագույն երկրներում և Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում իրենց տնօրինության տակ ունեն միլիարդներ ու միլիարդներ:

Կապիտալիստական տնտեսության հանրայնացման գործում սկսում են մրցել նաև խնայողական դրամարկղերն ու պոստային հիմնարկները, որոնք իրենց ազդեցության շրջանի մեջ են առնում ավելի շատ վայրեր, ավելի բազմաթիվ հետ ընկած անկյուններ, բնակչության ավելի լայն շրջաններ և այլն:

Եթե հին կապիտալիզմի, այսինքն արդյունաբերական կապիտալիզմի շրջանում իշխում էր ազատ մրցումը, վերջինս փոխարինվելով նոր կապիտալիզմով, նվազեցնում է բորսայի նշանակությունը, որովհետև տվյալ դեպքում, ինչպես ասում են, «յուրաքանչյուր բանկ բորսա է» դառնում:

Բանկերի այս համակենտրոնացման զուգընթաց սեղմվում է այն հիմնարկների շրջանակը, որոնք մինչ այդ կատարում էին վարկային գործարքներ, որոնց կարելի էր դիմել վարկ ստանալու համար: Այս երևույթի հետևանքով մեծանում է խոշոր արդյունաբերության կախումը սակավաթիվ բանկային խմբերից: Արդյունաբերության ու ֆինանսիստների աշխարհի սերտ կապի ժամանակ դժվարանում է նաև արդյունաբերական այլ և այլ ընկերությունների շարժման ազատությունը, որոնք իրենց հետագա գործունեության ընթացքում միշտ էլ բանկային կապիտալի կարիքն են զգում: Այս դեպքում ահա հնարավոր է դառնում համաձայնություններ կնքել խոշոր բանկերի առանձին կոնցեռնների միջև. այս համաձայնությունները վերջիվերջո հանգում են մրցումը սահմանափակելուն:

«Բանկային գործի զարգացման վերջին խոսքը կրկին ու կրկին մոնոպոլիան է»:

Ինչ վերաբերում է բանկերի ու արդյունաբերության մեջ եղած սերտ կապին, ապա բանկերի նոր դերը հենց ամենից շատ նկատելի է այս ասպարեզում: Օրինակ՝ եթե բանկը զեղչում է տվյալ ձեռնարկության մուրհակը, նրա համար ընթացիկ հաշիվ է բաց անում և այլն, ապա այս գործառնությունները առանձին վերցրած՝ մազաչափ անգամ չեն նվազեցնում այս ձեռնարկի ինքնուրույնությունը և բանկը դուրս չի գալիս միջնորդի համեստ դերից: Սակայն եթե այս գործառնություններն ավելի ու ավելի հաճախակի են կրկնվում և ամրապնդվում, եթե բանկը վիթխարի չափերով կապիտալներ է հավաքում իր ձեռքը, եթե տվյալ ձեռնարկության ընթացիկ հաշիվները պահել հնարավորություն է տալիս բանկին,—իսկ այս հենց այդպես էլ լինում է,—ավելի ու ավելի մանրամասն և լիովին ճանաչել իր կլիենտի տնտեսական դրությունը, ապա սրա հետևանքն այն է լինում, որ արդյունաբերական կապիտալիստը շարունակ ավելի ու ավելի լիակատար կախում է ունենում բանկից: Սրա հետ միաժամանակ զարգանում է բանկերի անձնական կապը արդյունաբերության և առևտրի խոշորագույն ձեռնարկությունների հետ, զարգանում է միաժամանակ բանկերի և ձեռնարկությունների ձուլումը շնորհիվ այն հանգամանքի, որ տիրանում են վերջիններիս ակցիաների—և բանկերի դիրեկտորները մտնում են առևտրական-արդյունաբերական ձեռնարկությունների հսկիչ խորհուրդների կամ վարչությունների մեջ իբրև անդամ և ընդհակառակը: Աշխատանքի այս բաժանումը կատարվում է երկու ուղղությամբ. մի կողմից ամբողջ արդյունաբերության հետ ունենալիք հարաբերությունները հանձնարարվում են դիրեկտորներից մեկին՝ իբրև սրա մասնագիտական գործ, մյուս կողմից՝ յուրա-



քանչյուր դիրեկտոր հանձն է առնում այն առանձին ձեռնարկությունների կամ հիմնարկությունների խմբերի հսկողությունը, որոնք մոտ են իրար ըստ պրոֆեսիայի:

## 5. Ֆինանսական օլիգարխիա, պայքար հում նյութի յեվ վաճառքի շուկաների համար

Արտադրության կոնցենտրացիա, սրանից առաջացող մոնոպոլիաներ, բանկերի ձուլում կամ սերտաճում արդյունաբերության հետ—ահա ֆինանսական կապիտալիզմի ծագման ամբողջ պատմությունը:

«Հին կապիտալիզմի համար, երբ իշխում էր ազատ մրցումը, արտահանվում էին գլխավորապես ապրանքներ: Նորագույն կապիտալիզմի համար, երբ տիրապետող է դարձել մոնոպոլիան, արտահանվում է գլխավորապես կապիտալ: Կապիտալիզմն ապրանքային արտադրությունն է, սրա զարգացման բարձրագույն աստիճանին հասած» (Լենին):

Փոխանակության աճումը—ինչպես երկրի ներսում, այնպես էլ մանավանդ միջազգային ասպարեզում կազմում է կապիտալիզմի բնորոշ ու տարբերիչ գիծը: Առանձին ձեռնարկությունների, արդյունաբերության առանձին ճյուղերի, առանձին երկրների զարգացման մեջ անխուսափելի է դառնում զարգացման անհամաչափություն և թռիչքներ: Անգլիան մյուսներից ավելի վաղ է դարձել կապիտալիստական երկիր և 19-րդ դարի կեսերին ազատ առևտուր մտցնելով ցանկանում էր բոլոր երկրներին ֆաբրիկաներ մատակարարողի դեր կատարել, այն երկրներին, որոնք պետք է նրան մատակարարեին հում նյութեղեններ: Սակայն 19-րդ դարի վերջին քառորդում արդեն Անգլիայի այս մոնոպոլիան խախտվեց, որովհետև մի շարք այլ երկրներ «հովանավորական» մաքսերով պաշտպանված լինելով»՝ զարգացան ու դարձան ինքնուրույն կապիտալիստական պետություններ: 20-րդ դարի շեմքին մենք տեսնում ենք, որ գոյանում են այլ տեսակի մոնոպոլիաներ: Իսկ առաջավոր երկրներում գոյացավ կապիտալի վիթխարի «ավելցուկ»:

«Եթե կապիտալիզմը կարողանար զարգացնել երկրագործությունը, եթե կարողանար բարձրացնել բնակչության մասսաների կյանքի մակարդակը, այն բնակչության, որ չնայած տեխնիկայի գլխապտույտ առաջդիմությանը, ամենուրեք մնում է կիսաքաղց ու մուրացիկ, այն ժամանակ խոսք չէր կարող լինել կապիտալիզմի ավելցուկի մասին: Սակայն այն ժամանակ կապիտալիզմը կապիտալիզմ չէր լինի, որովհետև թե զարգացման անհամաչափությունը և թե մասսաների կյանքի կիսաքաղց մակարդակն արտադրության այս եղանակի, այսինքն՝ կապիտալիզմի անխուսափելի պայմաններն ու նախադրյալներն են հանդիսանում: Քանի դեռ կապիտալիզմը կապիտալիզմ է մնում, կապիտալիզմի ավելցուկը գործադրվում է ոչ թե տվյալ երկրի մասսաների կյանքի մակարդակը բարձրացնելու վրա, այլ վաստակը մեծացնելու վրա, որ կատարվում է կապիտալն արտասահման, հետամնաց երկրներն արտահանելու միջոցով: Այս հետամնաց երկրներում վաստակը սովորաբար բարձր է, որովհետև կապիտալները քիչ են, հողի գինը համեմատաբար մեծ չէ, աշխատավարձը ցածր է, հում նյութեղեններն էժան են: Կապիտալի արտահանման հնարավորություն նրանով է ստեղծվում, որ մի շարք հետամնաց երկրներ արդեն ներս են քաշված համաշխարհային կապիտալիզմի շրջանառության մեջ:

«Կապիտալի արտահանումը կապիտալիզմի զարգացման վրա ազդեցություն է գործում անչափ արագացնելով այս զարգացումը այն յերկրներում, դեպի ուր ուղղվում է արտահանվող կապիտալը» (Լենին)։

Ֆինանսական կապիտալն առաջ բերեց մոնոպոլիաների դարաշրջան, իսկ մոնոպոլիաներն ամենուրեք տանում են իրենց հետ մոնոպոլիական սկզբունքները—բաց շուկայում կատարվող մրցման տեղը բռնում է ձեռնտու գործարքների համար «կապերի» ոգտագործումը։ Ամենասովորական բանն է, վոր փոխառության պայման է դրվում այն, թե փոխառության մի մասը պետք է ծախսվի վարկատու յերկրի արդյունքներ գնելու վրա, մանավանդ սպառազինման առարկաների վրա, նավերի վրա և այլն։ Որինակ Ֆրանսիան թե համաշխարհային պատերազմից առաջ, սկսած 1890–10 թվերի, ինչպես նաև համաշխարհային պատերազմից հետո, ամենալայն չափերով (մանավանդ վերջին տարիներս) կատարում է այդպիսի «վարկավորություն»։

«Կապիտալիստների մոնոպոլիստական միությունները—կարտելները, սինդիկատները, տրեստները, ինչպես ասվեց, ամենից առաջ ներքին շուկան են բաժանում իրար միջև՝ տվյալ յերկրի արտադրությունն ավելի ու ավելի գցելով իրենց ձեռքը և կատարելապես տիրելով նրան։ Սակայն կապիտալիզմի ժամանակ ներքին շուկան անխուսափելիորեն կապ ունի արտաքինի հետ։ Կապիտալիզմը վաղուց է ստեղծել համաշխարհային շուկա։ Յեվ որքան աճում եր կապիտալի արտահանումը և ամեն կերպ ընդլայնվում եյին խոշորագույն մոնոպոլիստական միությունների արտասահմանյան ու գաղութային կապերը, այն չափով էլ գործը հասնում եր այն կետին, վոր համաշխարհային համաձայնություն եր կնքվում սրանց միջև, կազմվում եյին միջազգային կարտելներ։ «Կապիտալի ու արտադրության համաշխարհային կոնցենտրացիայի մի նոր աստիճան է այս, վոր անհամեմատ ավելի բարձր է քան նախընթացները»։ (Լենին)։

Պարզենք։

Զանազան յերկրների կապիտալիստներն իրար դեմ պայքար են մղում արդյունաբերական ապրանքների վաճառահանման շուկաների, հում նյութերի շուկաների համար և այլն։ Այդ պայքարում մոնոպոլիաների կապիտալիստական խմբերը (անգլիական, գերմանական, ամերիկյան և այլն) ջանում են իրենց բացառիկ մոնոպոլ տիրապետության տակ առնել այդ շուկաները։ Այդ նպատակին նրանք հասնում են յերկու ամենագլխավոր միջոցներով. կամ այդ շուկաներն իրենց գաղութների վերածելով, կամ իրենց բացառիկ դրությունը տվյալ շուկայում տնտեսական ճնշման և ստրկացման միջոցով ամրապնդելով։ Վերջինի համար իբրև միջոց ծառայում է, ինչպես ասվեց, կապիտալների արտահանումը։ Իմպերիալիզմի դարաշրջանում, յերբ կատաղի պայքար է տեղի ունենում շուկաների համար, կապիտալների արտահանումը հսկայական չափերի յե հասնում։ Որինակ, մինչեվ 1914 թվականն Անգլիան ուրիշ յերկրներ եր արտահանել 100 միլիարդ ֆրանկ կապիտալ, Ֆրանսիան 60 միլիարդ, Գերմանիան 44 միլիարդ և այլն։ Կապիտալի արտահանման ձևերը, հետևաբար այն յերկրների ստրկացման յեղանակները, ուր արտահանվում եր կապիտալը, տարբեր են։ Այդ բանն արվում է համապատասխան յերկրի կառավարությանը փոխառություններ տալով, այդ յերկրում արդյունաբերական ձեռնարկություններ կառուցելով, յերկաթուղիներ շինելով և այլն։ «Ֆրանսիան» Ռուսաստանին փոխառություններ



տալով՝ նրան սեղմեց 1905 թ. սեպտեմբերի 16-ի առեվտրական պայմանագրով, վորով վորոշ զիջումներ ձեռք բերեց մինչեվ 1917 թվականը։ Արտասահմանյան կապիտալներով կատարված բրազիլիական յերկաթուղիների կառուցումը պայմանավորված եր բրազիլիական կառավարության պարտավորությամբ՝ շինարարական նյութերն այն յերկրներում գնելու, վորոնք փոխառություն են տվել։ Յեվրոպական պետությունների փոխառությունները Չինաստանին պատճառ դարձան, վոր Չինաստանն ընկավ այդ պետությունների ազդեցությունների տակ և այլն։

«Խոշորագույն կապիտալիստական պետություններն ուղղակի և անուղղակի կախում հաստատելու մեթոդներով ամբողջ աշխարհը բաժանեցին իրենց մեջ։ Աշխարհի մի մասն այդ պետությունների գաղութը դարձավ, իսկ մյուս մասն «ազդեցության շրջանների» բաժանվեց։

Յերբ աշխարհի բաժանումը վերջացած եր,—իսկ այդ արդեն տեղի ունեցավ 20-րդ դարի սկզբին,—նրան պատահեց այն, ինչ վոր լինում է գիշատիչների միջեվ ամեն մի բաժանման ժամանակ։ Բաժին անողները դժգոհ մնացին։ Վոմանց լավագույն կտորները հասան, մյուսներին ավելի վատ կտորները բաժին ընկան։ Այն ժամանակ առաջ է գալիս վերաբաժանման խնդիրը։ Բայց շահագործողների խմբերի միջեվ բաժանումը չի կարող խաղաղ կերպով կատարվել։ Բոլորն էլ պատերազմի յեն պատրաստվում իբր թե նրա համար, վորպեսզի միայն իրենց պաշտպանեն հարձակումից (պաշտպանեն կողոպտածը), բայց իսկապես ամեն մեկն իր հարևանին կողոպտելու յե պատրաստվում» (Լենին)։

Այդ պատճառով էլ իմպերիալիզմի դարաշրջանում նկատվում է միլիտարիզմի (զինվորականության) և մարինիզմի (ծովային սպառազինության) սաստիկ աճումը։ Ֆրանսիան, որինակ, 70-ական թվերից սկսած իր զորբանակը կրկնակի ավելացրեց և սպառազինության ծախքերը հասցրեց իր պետական բյուջեյի 38 տոկոսին։ Վերջին տարիներս Ֆրանսիան զանազան մինիստրությունների գծով և զանազան հոդվածների անվան տակ հսկայական գումարներ է հատկացնում ռազմական կարիքներին, հատկապես ռազմական ավիացիային, չհաշված, իհարկե, ռազմական մինիստրության պաշտոնական բյուջեն։ Անգլիան 1910 թվին իր բյուջեյի գրեթե կեսը ($42^1/_2$ տոկոսը) ծախսում եր սպառազինման վրա։ Գերմանիայի ռազմական ծախքերը 1881 թվից մինչեվ 1910 թ. 5,66 միլ. ֆրանկից աճեցին մինչեվ 11,7 միլ. ֆրանկ, այսինքն՝ ավելի քան 100 տոկոսով. սպառազինումների այդ աճումն ամենախոշոր պատերազմական ընդհարումների անընդհատ վտանգ է առաջ բերում։

«Մեծ պետությունների գաղութային տիրապետությունների կողքին մենք տեսնում ենք մանր պետությունների փոքրիկ գաղութներ, վորոնք հանդիսանում են մոտակա «ոբյեկտ» գաղութների հնարավոր ու հավանական վերաբաժանման համար։ Այս մանր պետությունները գաղութներն իրենց ձեռքում կարողացել են պահել շնորհիվ այն հանգամանքի, վոր խոշոր պետությունների մեջ կան շահերի հակադրություններ, դժտություններ և այլն, վորոնք խանգարում են ավարը բաժանելու համար համաձայնության գալու։ Ինչ վերաբերում է կիսագաղութային պետություններին, ապա նրանք անցման ձևի որինակ են հանդիսանում միայն»։ Ֆինանսական կապիտալը մի այնպիսի ահռելի ու վճռական ուժ է, վոր ընդունակ է իրեն հպատակեցնելու և իրոք հպատակեցնում է այնպիսի պետություններ, վորոնք լրիվ քաղա-

դաքական անկախություն ունեն: Օրինակ՝ Հ. Ա. Մ. Նահանգներից տնտեսապես կախման մեջ են Յեվրոպայի համարյա բոլոր պետությունները: Կիսագաղութային յերկրները այդ տեսակետից հանդիսանում են միայն իբրև «միջին տեղ բռնողներ» և սրանց համար մղվող կռիվը սրվում է հատկապես ֆինանսական կապիտալի դարաշրջանում, յերբ մնացած ամբողջ աշխարհը արդեն բաժանված է:

«Գաղութային քաղաքականությունն ու իմպերիալիզմը գոյություն ունեյին կապիտալիզմի նորագույն աստիճանից էլ առաջ, նույնիսկ նախակապիտալիստական հասարակարգերում: Օրինակ՝ ստրկության վրա հիմնված հին Հռոմը գաղութային քաղաքականություն եր վարում և նվաճողական պատերազմներ տանում, սակայն կապիտալիզմի նախկին աստիճանների և մանավանդ նրանից առաջ յեղած «իմպերիալիզմը» և գաղութային քաղաքականությունն եյապես տարբերվում է ֆինանսական կապիտալի գաղութային քաղաքականությունից:

Նորագույն կապիտալիզմի հիմնական առանձնահատկությունը խոշորագույն ձեռնարկումների մոնոպոլիստական միությունների տիրապետությունն է» (Լենին): Այսպիսի մոնոպոլիաներն ամենից ավելի հաստատուն են, վոր իրենց ձեռքն են դցում հում նյութեղենների բոլոր աղբյուրները, ջանալով ամեն կերպ հակառակորդից խլել մրցման ամեն մի հնարավորություն: Վորքան ավելի յե զարգացած կապիտալիզմը, վորքան ավելի սաստիկ է զգացվում հում նյութի պակասությունը, վորքան ավելի յե սրվում հում նյութի աղբյուրների համար մղվող մրցումն ու վազքը նրանց հետևից ամբողջ աշխարհում, այնքան ավելի կատաղի յե լինում գաղութներ ձեռք բերելու համար մղվող կռիվը:

## 6. Կապիտալիզմի փտումը

Սակայն իմպերիալիզմին հատուկ են նաև մի քանի առանձին գծեր: Արտադրության, տրանսպորտի և հաղորդակցության ճանապարհների, տեխնիկայի և այլն աճման ու զարգացման հետ միասին կապիտալիզմի մեջ նկատվում են անկման և փտության բազմաթիվ հատկանիշներ: Մենաշնորհը, վոր շուկայի մոնոպոլ գների հաստատման պատճառ է դառնում, արտադրության մեջ տեխնիկական անշարժություն է առաջ բերում: Միևնույն է, գնողն ապրանքի համար բարձր գին կվճարի, էլ ինչու բարելավել արտադրության տեխնիկան—այսպես է դատում կապիտալիստը: «Օրինակ՝ Ամերիկայում վոմն Օուենս շշեր պատրաստելու մի այնպիսի մեքենա հնարեց, վոր հեղափոխություն եր առաջ բերում շշերի արտադրության մեջ: Շշերի ֆաբրիկաների գերմանական կարտելը գնում է Օուենսի պատենտները և մինչարի տակ դնում, նրանց գործադրությունը հապաղեցնում»:

«Բաժնետիրական ձեռնարկությունների, կապիտալի արտահանման աճումն այնտեղ է հասցնում, վոր կապիտալիստը բոլորովին հեռանում է արտադրության կառավարության մեջ մասնակցություն ունենալուց: Նա իր ներդրած կապիտալների փոխարեն ստանում է մի կապոց արժեթղթեր (ակցիաներ), կտրում է այդ ակցիաների կուպոնները և ստանում տոկոսները: Հանդես է գալիս «ռանտյե»-ների պարապ խավը, վորոնք ապրում են «կուպոններ կտրելով»: Միայն Անգլիայում ռանտյեների յեկամուտները 5 անգամ



ավելի յեն, քան թե արտաքին առևտրից ստացված անգլիական յեկամուտները» (Լենին. «Իմպերիալիզմը»):

## 7. Բանվոր դասակարգի դրությունը յեվ պայքարը

Իմպերիալիզմի դարաշրջանը, վորն աճեց տեխնիկայի հսկայական զարգացման և աշխատանքի ինտենսիվության արտասովոր չափերով զարգանալու հիման վրա, առաջ բերավ բանվոր դասակարգի շահագործման նոր ձևեր և շահագործման անասելի ուժեղացում: Այս ուժեղացմանը մեծապես նպաստում է գործազուրկների զորաբանակի հսկայական աճումը, վորը կապված է մի կողմից մանր սեփականատերերի սեփականազրկման, մյուս կողմից բանվորների համեմատաբար յետ մղվելու հետ մեքենաների կողմից: Այս յերևույթը տանում է բանվորների վոչ միայն հարաբերական, այլև բացարձակ աղքատացմանը: Վերջինս իր ծայրահեղ չափերին հասավ հետպատերազմյան շրջանում, հատկապես վերջին յերկու տարիների ընթացքում:

Յուրաքանչյուր գործադուլ, յուրաքանչյուր կոնֆլիկտ դիպչում է բանվորների ահագին մասսաներին և այլևս անհնարին դարձնում կռիվն առանձին խմբերով, նա ընդգրկում է ամբողջ յերկրներ, իսկ յերբեմն էլ դուրս է գալիս առանձին յերկրների շրջաններից: Այդ բոլորն արտասովոր կերպով սրում է դասակարգային կռիվը: Կապիտալիստների կազմակերպված մոնոպոլ բանակների և նրանց յետևից յեկող կապիտալիստական պետությունների կազմակերպված ճակատի դեմ հետզհետե կազմակերպվում է բանվորների միջազգային ճակատ:

«Դասակարգային կռիվը առանձին բանվորական խմբերի մեկուսացած յելույթներից դառնում է համաշխարհային պրոլետարիատի ազգային, ապա նաև միջազգային կռիվ համաշխարհային բուրժուազիայի դեմ» (Կոմինտերնի ծրագրից):

Այդ յերկրների կապիտալիստները բանվոր դասակարգի հեղափոխական շարժումը խափանելու և ջլատելու համար իրենց ստացած հսկայական գերշահույթներից մի փոքր շպրտում են բանվորական վերնաշերտի, վորակյալ բանվորներից և զանազան պաշտոնատար անձերից բաղկացած բանվորական արիստոկրատիայի ձեռքը, կաշառում վերջիններիս և այդ ճանապարհով ավելի սրում ստորին խավերի բազմամիլիոն մասսաներին: Այդ տեսակետից առանձնապես աչքի յե ընկնում Անգլիան, իսկ պատերազմից հետո Հյուսիս. Ամերիկայի Միացյալ Նահանգները: Այստեղ բանվորի աշխատավարձը 2,2 անգամ գերազանցում է նույնիսկ անգլիական վորակյալ վերնախավի աշխատավարձից (վորն իր հերթին հինգ անգամ ավելի յե հնդիկ բանվորի աշխատավարձից), յերեք անգամ ֆրանսիականից, 5 անգամ իտալականից, չեխականից և այլն և 10 անգամ Հնդկաստանի բանվորի աշխատավարձից:

«Կյանքի կոչելով բանվոր դասակարգի կաշառված վերնախավի աճումը, իմպերիալիզմը, Կոմինտերնի ծրագրի խոսքերի համաձայն, վերջիվերջո վոչնչացնում է նրա ազդեցությունը բանվոր դասակարգի վրա, վորովհետև իմպերիալիզմի զարգացումը տանում է դեպի նրա հակասությունների խորացումը, դեպի բանվորական լայն մասսաների դրության վատթարացումը և պրոլետարիատի մասսայական գործազրկությունը, դեպի պատերազմական կոնֆլիկտների հսկայական ծախքերը, դեպի այն դրությունը, յերբ մի քանի

պետությունները կորցնում են իրենց մնացած դիրքերը համաշխարհային շուկայում, զրկվում են գաղութներից և այլն:

Բանվոր դասակարգի տնտեսական դրության վատթարացման զուգահեռ քայքայվում է նաև ազգաբնակչության վարակյալ շերտերի—գյուղացիության, արհեստավորների և այլ մանր սեփականատերերի տնտեսությունը: Իր տնտեսական առանց այն էլ յերերուն վիճակից արագորեն վայր գլորվող բանվորական մասսաները կապիտալի սեփական օրենքների «կախարդական» ուժով ի վերջո գրոհում են նրա դեմ և շղթայազերծ դառնալով վերջին հարվածը հասցնում կապիտալիզմի շենքին:

## 8. Դասակարգային յեվ ազգային կռիվը գաղութներում յեվ յետամնաց յերկրներում

Այս յերկրամասերում առանձնապես ծանր է բանվոր դասակարգի դրությունը, վորովհետև բանվորական մասսան և աշխատավորությունը յենթարկվում են արդեն կրկնակի շահագործման թե իր հայրենի բուրժուազիայի և թե «առաջավոր» կապիտալիստական յերկրների բուրժուազիայի կողմից, վորոնք գաղութներն ու յետամնաց յերկրները բաժանել են իրենց մեջ ազդեցության շրջանների և լիակատար տիրապետության:

Շահագործման սրբնաց ուժեղ ճնշումն այստեղ մասամբ արդյունք է բանվորական մասսաների հետամնացության և անկազմակերպ վիճակի: Սակայն կապիտալիզմը, համակենտրոնացնելով պրոլետարիատին հսկայական ձեռնարկությունների մեջ, կապիտալներ փոխադրելով «մայր յերկրից» այստեղ նախադրյալներ է ստեղծում նրա կազմակերպության և բուրժուազիայի դեմ համախմբված ուժերով հանդես գալու համար: Բացի սրանից դասակարգային կռիվը գաղութներում և հետամնաց յերկրներում բնորոշ է նրանով, վոր նա սերտորեն կապվում է ազգային կռվի հետ, վորովհետև բանվորի ազատագրումը շահագործման լծից սերտ կերպով կապված է տարերկրյա կապիտալիստներից յերկիրն ազատագրելու համար մղվող կռվի հետ: Անկախության համար մղվող կռվում բանվոր դասակարգն ոգնություն է ստանում գյուղացիության, քաղաքային մանր բուրժուազիայի կողմից, վորի վիճակը նույնպես յերերուն է և յենթակա գաղութային շահագործման: Սակայն, հանուն ազգային անկախության վարած պայքարի առաջին էտապում տարերկրյա բուրժուազիայի դեմ միասնաբար հանդես յեկած ճակատը պառակտվում է և տեղական հայրենի բուրժուազիան կաշառվելով իմպերիալիստական բուրժուազիայից անցնում է վերջինիս կողմը և հանդես գալիս արդեն իր յերկրի հեղափոխական շարժման դեմ: Այս պայմաններում շարժումն ընդունում է նոր բնույթ և առաջ է տարվում բանվորների և գյուղացիների դեմոկրատիկ դիկտատուրայի լոզունգի տակ, բանվոր դասակարգի ղեկավարությամբ, իր վերջին էտապում վերածվելով արդեն դասակարգային մխահամառ պայքարի հանուն խորհուրդների իշխանության (օրինակ պայքար Չինաստանում և Հնդկաստանում):

## 9. Կապիտալիստական բուրժուազիայի այլասերումը

Կապիտալիստական բուրժուազիան ավելի և ավելի հեռանալով արտադրության պրոցեսից, վարժվելով ակցիոներական ընկերությունների և բանկային միավորումների բազմաթիվ՝ և խորամանկ մեքենայություններին,



վարժվելով վերջապես «կուպոններ կտրելու» հեշտ միջոցին և սեփական յերկրի ու ազդեցության շրջանների անսահման շահագործմանը, դառնում է լիապես մակաբուծական — պարազիտ միջնախավ, վորն ընդունակ է միայն իր «նուրբ կարիքները» բավարարել:

Այս պայմաններում գլխովին այլասերված բուրժուազիան այլևս անընդունակ է դառնում իր խոշոր մարդկանց առաջ մղելու քաղաքական-պետական գործունեության ասպարեզ, վորոնք ի վիճակի լինեյին ապահովել իրենց դասակարգի տիրապետությունը: Այս պարտականությունն էլ իրենց վրա յեն վերցնում ուրիշ դասակարգերից դուրս յեկած կապիտալիստների վարձկան ծառաները:

Բնավ պատահական չէ, վոր արդի կապիտալիստական յերկրների ամենատաղանդավոր և ճարպիկ քաղաքագետները դուրս են յեկել բանվորական դասակարգի միջից կամ դաստիարակվել նրանց գաղափարների միջավայրում և ոպորտունիզմի գծով հասել սոցիալ-դավաճանության: Կլեմանսոն, Միլյերանը, Բրիանը Ֆրանսիայում, Լլոյդ-Ջորջը Անգլիայում, Մուսոլինին Իտալիայում, Պիլսուդսկին Լեհաստանում և այլն՝ յեղել են նախկին սոցիալիստներ:

Կապիտալիստական բուրժուազիայի այլասերումն իր արտահայտությունը գտնում է նաև այդ յերկրների ամբողջ հոգևոր կուլտուրայի բնագավառում (գրականություն, արվեստ և այլն):

# ՀԱՎԵԼՎԱԾ

## ՈՒԼՏՐԱ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ԿԱՄ ԳԵՐԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ՄԱՍԻՆ

Իմպերիալիզմի քննադատությունը մենք հասկանում ենք բառիս լայն իմաստով, իբրև վերաբերմունք դեպի հասարակության տարբեր դասակարգերի իմպերիալիզմի քաղաքականության, վոր զուգորդված է նրանց ընդհանուր իդեոլոգիայի հետ:

Մի կողմից՝ հսկա չափերը ֆինանսական կապիտալի, վոր համակենտրոնացած է սակավաթիվ ձեռքերում և ստեղծում է հարաբերությունների ու կապերի արտասովոր, լայն տարածված ու խիտ ցանց, վորը նրան է հպատակեցնում վոչ միայն միջին ու մանր, այլ և մանրագույն կապիտալիստներին ու տնտեսատերերին, իսկ մյուս կողմից՝ այն սրված կռիվը, վոր աշխարհը բաժանելու համար ու մյուս յերկրներին տիրելու համար մղում են ֆինանսիստների այլ ազգային-պետական խմբերի դեմ,—այս բոլորը պատճառ է լինում, վոր բոլոր ունևոր դասակարգերը գլխովին անցնում են իմպերիալիզմի կողմը: Իմպերիալիզմի հեռանկարներով հրապուրվելը բոլորի կողմից, իմպերիալիզմի կատաղի պաշտպանությունը, իմպերիալիզմն ամեն կերպ գեղազարդելը,—ահա թե վորն է ժամանակի ցուցանիշը: Իմպերիալիստական իդեոլոգիան թափանցում է բանվոր դասակարգի մեջ: Բանվոր դասակարգին չինական պատեր չեն անջատում մյուս դասակարգերից: Յեթե Գերմանիայի այժմյան այսպես կոչված «սոցիալ-դեմոկրատական» կուսակցության պարագլուխներն իրավամբ ստացել են «սոցիալ իմպերիալիստներ» անունը, այսինքն՝ սոցիալիստներ խոսքով, իմպերիալիստներ գործով, ապա Հոբսոնը

Гос. Библиотека
ЗССР-Арм.ССР
им. А. Мясникяна
2959-59

գեռ 1902 թվին նշել էր, վոր Անգլիայում գոյություն ունեն «ֆաբյան իմպերիալիստներ», վորոնք պատկանում եյին ոպորտյունիստական «Ֆաբյանների Ընկերության»:

Բուրժուական գիտնականներն ու հրապարակախոսները, երբ իմպերիալիզմի պաշտպաններ, հանդես են գալիս սովորաբար մի քիչ քողարկված ձևով, մթագնելով իմպերիալիզմի լիակատար տիրապետությունն ու սրա խոր արմատները, աշխատելով առաջին շարքը մղել մասնակի յերևույթներն ու յերկրորդական մանրամասնությունները, ջանալով ուշադրությունը հեռացնել, եյականից՝ առաջարկելով «ռեֆորմների» վոչ-լուրջ նախագծեր, ինչպես, որինակ՝ վոստիկանական հսկողություն սահմանել տրեստների կամ բանկերի վրա և այլն: Ավելի սակավ անգամ են հանդես գալիս ցինիկ, անքող իմպերիալիստներ, վորոնք համարձակություն ունեն խոստովանելու, թե իմպերիալիզմի հատկությունները «բարենորոգելու» միտքն անհեթեթություն է:

Բերենք մի որինակ. «Համաշխարհային տնտեսության արխիվ» կոչվող հրատարակության մեջ գերմանական իմպերիալիստներն աշխատում են հետևել այն ազգային ազատագրական շարժումներին, վորոնք տեղի յեն ունենում գաղութներում, հատկապես, իհարկե, վոչ գերմանական գաղութներում: Նրանք նշում են Հնդկաստանում յեղած խմորումն ու բողոքները, Նատալում (Հարավային Աֆրիկայի), Հոլլանդական Հնդկաստանում և այլուր յեղած շարժումը և այլն: 1910 թվի հունիսի 28–30-ին տեղի ունեցավ հպատակ ազգությունների ու ցեղերի կոնֆերանս, վոր կազմված եր Ասիայի, Աֆրիկայի, Յեվրոպայի ոտարյերկրյա տիրապետության տակ գտնվող դանական ժողովուրդների ներկայացուցիչներից: Գերմանական իմպերիալիստներից մեկը մի նկատողության մեջ, վոր արել է այս կոնֆերանսի հաշվետվությունը պարունակող անգլիական մի հրատարակության առթիվ, այս կոնֆերանսում արտասանված ճառերը գնահատելով՝ գրում է. «Մեզ ասում են, թե պետք է կռվել իմպերիալիզմի դեմ, իշխող պետությունները պետք է ճանաչեն հպատակ ժողովուրդների անկախության իրավունքը, միջազգային արբիտրաժը պետք է հսկի, վոր կատարվեն այն պայմանագրերը, վորոնք կնքված են մեծ պետությունների ու թույլ ժողովուրդների միջև: Կոնֆերանսն այս անմեղ բաղձանքներից դենը չի անցնում: Մենք հետքն էլ չենք տեսնում այն ճշմարտության ըմբռնման, թե իմպերիալիզմն անքակտելիորեն կապ ունի կապիտալիզմի հետ սրա այժմյան ձևով, և թե, հետևաբար (!!), իմպերիալիզմի դեմ մղվող ուղղակի կռիվն անհուսալի յէ, բայց, թերևս այն դեպքից, յեթե սահմանափակվեն առանձին, հատկապես զզվելի եքսցեսների դեմ կատարելիք յելույթով» 102:

Արդյոք հնարավո՞ր է իմպերիալիզմի հիմքերի ռեֆորմիստական փոփոխումը, արդյոք պե՞տք է էլ ավելի առաջ ընթանալ դեպի այն հակասությունների հետագա սրումն ու խորացումը, վոր ծնում է իմպերիալիզմի, թե՞ պետք է գնալ դեպի հետ, դեպի նրանց բթացումը,—այս խնդիրներն իմպերիալիզմի քննադատության հիմնական հարցերն են: Վորովհետև իմպերիալիզմի քաղաքական առանձնահատկություններն են հանդիսանում ռեակցիան ամբողջ գծով ու ազգային ճնշման սաստկացումը, վոր կապ ունի ֆինանսական օլիգարխիայի ճնշման ու ազատ մրցումը վերացնելու հետ, ապա իմպերիա-



լիզմի դեմ յեղած մանր-բուրժուական-դեմոկրատական ոպոզիցիան հանդես է գալիս 20-րդ դարի սկզբին համարյա բոլոր իմպերիալիստական յերկրներում: Յեվ Կաուցկու ու կաուցկիականության միջազգային լայնածավալ հոսանքի խզումը, անջատումը մարքսիզմից հենց այն է, վոր Կաուցկին վոչ միայն հոգ չտարավ, չկարողացավ իրեն հակադրել այս մանր բուրժուական-ռեֆորմիստական իր հիմքով տնտեսապես հետադիմական ոպոզիցիային, այլ, ընդհակառակը, գործնականապես ձուլվեց նրա հետ:

Ահա մի նմուշ Կաուցկու՝ իմպերիալիզմի տնտեսական քննադատությունից: Նա վերցնում է 1872 և 1912 թվականներին Անգլիայի Յեգիպտոսից արտահանած ու ներմուծած արդյունքներին վերաբերող տվյալները. բանից դուրս է գալիս, վոր այս արտահանությունն ու ներմուծումն ավելի թույլ եր աճում, քան Անգլիայի ընդհանուր արտահանությունն ու ներմուծումը: Յեվ Կաուցկին յեզրակացնում է. «Մենք վոչ մի հիմունք չունենք յենթադրելու, թե առանց Յեգիպտոսի ռազմական նվաճման, Յեգիպտոսի հետ կատարած առևտուրն ավելի պակաս կաճեր տնտեսական գործոնների պարզ կշռի ազդեցության շնորհիվ»: «Կապիտալի ընդլայնման ձգտումներն ամենից ավելի լավ կարող են իրականանալ վոչ թե իմպերիալիզմի բռնի միջոցներով, այլ խաղաղ դեմոկրատիայի միջոցով» 105:

Կաուցկու այս կշռադատությունը, վոր հարյուր տեսակ յերգել են նրա ռուսական զինակիրները, կազմում է նրա՝ իմպերիալիզմի քննադատության հիմքը և այս պատճառով պետք է ավելի մանրամասն կանգ առնենք նրա վրա: Սկսենք Հիլֆերդինգից բերած ցիտատից, ում յեզրակացությունները Կաուցկին բազմաթիվ անգամ, ի թիվս վորոնց և 1915 թվի ապրիլին, հայտարարում եր, թե՝ «Միաձայն ընդունել են բոլոր սոցիալիստական թեորետիկները»:

«Պրոլետարիատի գործը չպիտի լինի,—գրում է Հիլֆերդինգը,—կապիտալիստական ավելի առաջադիմական քաղաքականությանը հակադրել անցյալի դիրկն ընկած ազատ մրցման, այլև պետությանը թշնամաբար վերաբերվելու դարաշրջանը: Այն պատասխանը, վոր պիտի տա պրոլետարիատը ֆինանսական կապիտալի տնտեսական քաղաքականությանը, իմպերիալիզմին, կարող է լինել վոչ թե առևտրի ազատությունը, այլ միայն սոցիալիզմի: Այժմ պրոլետարական քաղաքականության նպատակը կարող է լինել վոչ թե այնպիսի իդեալը, վորպիսին է ազատ մրցման վերականգնումը,—այժմ այս դարձել է հետադիմական իդեալ,—այլ կապիտալիզմը վերացնելու միջոցով մրցումը լրիվին վոչնչացնելը միայն»: 106:

Կաուցկին խզեց իր կապերը մարքսիզմի հետ՝ ֆինանսական կապիտալի դարաշրջանի համար պաշտպանելով «հետադիմական իդեալը», «խաղաղ դեմոկրատիա», «տնտեսական գործոնների պարզ կշիռ», վորովհետև այս իդեալն օբյեկտիվ կերպով քաշում է դեպի հետ, մոնոպոլիստական կապիտալիզմից դեպի վոչ-մոնոպոլիստականը, վորովհետև այս իդեալը ռեֆորմիստական խաբեբայություն է:

Յեգիպտոսի (կամ մի ուրիշ գաղութի կամ կիսագաղութի) հետ կատարած առևտուրն ավելի սաստիկ «կաճեր» առանց ռազմական գրավման, առանց իմպերիալիզմի, առանց ֆինանսական կապիտալի: Ի՞նչ է նշանակում այս: Վոր կապիտալիզմն ավելի արագ կզարգանար, յեթե ազատ մրցումը չը-

սահմանափակվեր վոչ մոնոպոլիաներով ընդհանրապես, վոչ ֆինանսական կապիտալի «կապերով» կամ ճնշումով (վոր նույնպես մոնոպոլիա յե), վոչ էլ առանձին յերկրների կողմից գաղութներին մոնոպոլ կերպով տիրելով:

Կաուցկու դատողությունները այլ իմաստ ունենալ չեն կարող: Յենթադրենք, վոր այո, վոր ազատ մրցումը, առանց վորևե մոնոպոլիաների՝ կապիտալիզմն ու առևտուրն ավելի արագ կզարգացներ: Բայց չէ՞ վոր ինչքան ավելի արագ ե տեղի ունենում առևտրի ու կապիտալիզմի զարգացումը, այնքան ավելի սաստիկ ե լինում արտադրության ու կապիտալի կոնցենտրացիան, վորի ծնունդն ե մոնոպոլիան: Յեվ մոնոպոլիաներն արդեն ծնվել են հենց ազատ մրցումից: Յեթե մոնոպոլիաներն այժմ սկսել են նույնիսկ դանդաղեցնել զարգացումը, այս, այնուամենայնիվ, պատճառաբանություն չե հօգուտ ազատ մրցման, վորը այլևս անհնարին ե այն բանից հետո, յերբ ազատ մրցումը մոնոպոլիա յե ծնել:

Յեթե այս դատողությունն ուղղենք և ասենք, ինչպես ասում ե Սպեկտատորը, թե անգլիական գաղութների Անգլիայի հետ ունեցած առևտուրն այժմ ավելի դանդաղ ե զարգանում, քան նրանց այլ յերկրների հետ ունեցած առևտուրը, ապա այս էլ չե փրկում Կաուցկուն, վորովհետև Անգլիային հարվածներ ե հասցնում նույն այդ մոնոպոլիան, նույն այդ իմպերիալիզմը, միայն ուրիշ յերկրինը (Ամերիկայինը, Գերմանիայինը): Հայտնի յե, վոր կարտելները հասցրել են մի նոր որիգինալ տիպի պատկանող հովանավորական մաքսերի․ հովանավորվում են (այս նշել ե դեռ Ենգելսը «Կապիտալի» 3-րդ հատորում) հենց այն արդյունքները, վորոնք ընդունակ են արտահանվելու: Այնուհետև հայտնի յե կարտելներին ու ֆինանսական կապիտալին հատուկ «դեն նետելու գներով արտահանելու», «դուրս շպրտելու» սիստեմը, ինչպես ասում են անգլիացիք, յերկրի ներսում կարտելն իր արդյունքները ծախում ե մոնոպոլ բարձր գնով, իսկ արտասահմանում վաճառում ե չափազանց եժան, վորպեսզի քայքայի մրցորդին, վորպեսզի ընդլայնե և մաքսիմումի հասցնե իր արտադրությունը և այլն: Յեթե Գերմանիան ավելի արագ ե զարգացնում իր առևտուրն անգլիական գաղութների հետ, քան Անգլիան, ապա այս ապացուցում ե այն միայն, վոր գերմանական իմպերիալիզմն ավելի թարմ, ավելի զորեղ, ավելի կազմակերպված, ավելի բարձր ե, քան անգլիականը, սակայն այս ամենևին չի ապացուցում ազատ առևտրի «գերակշռությունը», վորովհետև վոչ թե ազատ առևտուրն ե կռվում պրոտեկցիոնիզմի, գաղութային կախյալ վիճակի դեմ, այլ մեկ իմպերիալիզմն ե կռվում մյուսի դեմ, մեկ մոնոպոլիան՝ մի այլ մոնոպոլիայի դեմ, մեկ ֆինանսական կապիտալը՝ մի ուրիշ ֆինանսական կապիտալի դեմ: Գերմանական իմպերիալիզմի անգլիականի հանդեպ ունեցած գերակշռությունն ավելի զորեղ ե, քան գաղութային սահմանների կամ հովանավորական մաքսերի պատնեշը․ այստեղից յեզրակացություն հանել ազատ առևտրի ու խաղաղ դեմոկրատիայի ոգտին—նշանակում ե մոռանալ իմպերիալիզմի հիմնական գծերն ու հատկությունները, մարքսիզմը փոխարինել քաղքենիական ռեֆորմիզմով:

Կաուցկու իմպերիալիզմի տեսական քննադատությունը հենց նրա համար վոչ մի առնչություն չունի մարքսիզմի հետ, հենց նրա համար ե պիտանի միայն իբրև խաղաղության քարոզի և ոպորտյունիստների ու սոցիալ շովինիստների հետ միանալու քարոզի մերձեցում, վոր այս քննադատությունն անտես ե առնում և մթագնում ե իմպերիալիզմի հենց ամենախոր ու ամենից արմատական հակասությունները, այն հակասությունները, վոր կա մոնոպոլիաների ու սրա հետ կողք-կողքի գոյություն ունեցող ազատ մրցման միջև․ ֆինանսական կապիտալի հսկա «գործառնությունների» (ու հսկա վաստակների) և ազատ շուկայում տեղի ունեցող «ազնիվ» առևտրի միջև, կարտելների ու տրեստների միջև՝ մի կողմից, ու չկարտելացրած արդյունաբերության միջև՝ մյուս կողմից և այլն:

Միանգամայն նույնպիսի հետամնաց բնույթ ե կրում, ինչպես վերևում տեսանք, «ուլտրա իմպերիալիզմի» այն չարաբաստիկ թեորիան էլ, վոր հեղինակել ե Կաուցկին:

Իրոք բավական ե պարզ կերպով կողք-կողքի դնել հանրահայտնի, անվիճելի փաստեր համոզվելու համար, թե վորքան սխալ են այն հեռանկարները, վոր Կաուցկին աշխատում ե ներշնչել գերմանական բանվորներին (ու ամբողջ աշխարհի բանվորներին): Առնենք Հնդկաստանը, Հնդկաչինն ու Չինաստանը: Հայտնի յե, վոր այս յերեք գաղութային ու կիսագաղութային յերկրները, վորոնք ունեն 6–7 հարյուր միլիոն բնակչություն, յենթակա յեն մի քանի իմպերիալիստական պետությունների—Անգլիայի, Ֆրանսիայի, Յապոնիայի, Միացյալ Նահանգների ու այլոց ֆինանսական կապիտալի շահագործմանը: Յենթադրենք, վոր այս իմպերիալիստական յերկրները մեկը մյուսի դեմ միություններ կկազմեն՝ վերոհիշյալ ասիական պետությունների մեջ իրենց տիրապետությունները, շահերն ու «ազդեցության շրջանները» պաշտպանելու կամ ընդլայնելու նպատակով: Նրանց արածը կլինի «միջ-իմպերիալիստական» կամ «ուլտրա-իմպերիալիստական միություններ»: Յենթադրենք, վոր բոլոր իմպերիալիստական պետությունները միություն կը կազմեն վերոհիշյալ ասիական յերկրները «խաղաղորեն» բաժանելու համար,—այս կլինի «միջազգայնորեն միավորված ֆինանսական կապիտալ»: 20-րդ դարի պատմության մեջ, որինակ՝ պետությունների՝ Չինաստանի նկատմամբ ունեցած հարաբերությունների մեջ այսպիսի միության փաստական որինակներ կան: Հարց ե առաջ գալիս, արդյոք «հնարավո՞ր ե» յենթադրել, թե կապիտալիզմի պահպանության դեպքում (իսկ Կաուցկին հենց այսպիսի պայման էլ յենթադրում ե), այսպիսի միությունները կարճատև չեն լինել: Կարելի՞ յե յենթադրել, վոր այս միություններն անհնարին կդարձնեյին գժտությունները, ընդհարումներն ու կռիվը՝ սրանց ամեն տեսակի ու ամեն հնարավոր ձևերով:

Բավական ե այս հարցը պարզ դնել, վորպեսզի անկարելի լինի սրան այլ պատասխան տալ, քան բացասականը: Վորովհետև կապիտալիզմի ժամանակ անյերևակայելի յե ազդեցությունների շրջանների, շահերի, գաղութների ու այլոց բաժանման այլ հիմունք, քան բաժանման մասնակիցների ուժի հաշվառքը, համատնտեսական, ֆինանսական, ռազմական և այլն ուժի հաշվառքը: Իսկ բաժանման այս մասնակիցների ուժը միակերպ չի փոփոխվում, վորովհետև կապիտալիզմի ժամանակ առանձին ձեռնարկությունների, տրեստների, արդյունաբերության ճյուղերի, յերկրների համաչափ զարգացում չի կարող լինել: Կես դար սրանից առաջ Գերմանիան մի վողորմելի վոչնչություն եր, յեթե սրա կապիտալիստական ուժը համեմատենք այն

ժամանակվա Անգլիայի ուժի հետ. Նույնն էր Ճապոնիան Ռուսաստանի համեմատությամբ: Հնարավո՞ր է արդյոք յենթադրել, վոր մի յերկու տասնյակ տարիներից հետո իմպերիալիստական պետությունների ուժի փոխհարաբերությունն անփոփոխ կմնա: Բացարձակապես աներևակայելի յե այս:

Ուստի և կապիտալիստական իրականության մեջ «գեր-իմպերիալիստական» կամ «ուլտրա-իմպերիալիստական» միությունները, ինչ ձևով էլ վոր կնքվեն այս միությունները—մեկ իմպերիալիստական կոալիցիայի ձևով ընդդեմ մի այլ իմպերիալիստական կոալիցիայի, թե բոլոր իմպերիալիստական պետությունների ընդհանրական միության ձևով,—այս միություններն անխուսափելիորեն պատերազմի միջև ընկած «դադարներ» են միայն: Խաղաղ միությունները կանխապատրաստում են պատերազմներ և իրենց հերթին առաջանում են պատերազմներից, մեկը մյուսին պայմանավորելով, առաջացնելով համաշխարհային տնտեսության ու համաշխարհային քաղաքականության իմպերիալիստական կապերի ու փոխհարաբերությունների հենց միևնույն հողից խաղաղ ու վոչ-խաղաղ կռվի ձևերի փոփոխություն:

Կաուցկու իմպերիալիզմի ամենախոր հակասությունների մթագնումը, վոր անխուսափելիորեն դառնում է իմպերիալիզմի գեղազարդումն, իր հետքն է թողնում իմպերիալիզմի քաղաքական հատկությունների այն քննադատության վրա, վոր անում է այս հեղինակը: Իմպերիալիզմը դարաշրջան է ֆինանսական կապիտալի ու մոնոպոլիաների, վորոնք ամենուրեք ցուցահանում են ձգտումներ դեպի տիրապետություն և վոչ թե ազատություն: Քաղաքական ամեն տեսակի կարգերում ամբողջ գծով ռեակցիա, հակասությունների ծայրահեղ սրումը նաև այս ասպարեզում՝ հետևանք է այս տենդենցների: Առանձնապես սրվում է նաև ազգային ճնշումն ու աննեկսիաների, այսինքն՝ ազգային անկախության խախտումների ձգտումն էլ (վորովհետև աննեկսիան վոչ այլ ինչ է, յեթե վոչ ազգերի ինքնորոշման խախտումն): Հիլֆերդինգն իրավացի յե նշում այն կապը, վոր ունի իմպերիալիզմն ազգային ճնշման սրվելու հետ. «Ինչ վերաբերում է նոր հայտնագործված յերկրներին,—գրում է նա,—ներմուծվող կապիտալն այնտեղ սաստկացնում է հակասությունը և առաջ է բերում ազգային ինքնագիտակցության զարթոնք ունեցող ժողովուրդների հարաճուն դիմադրություն ընդդեմ յեկվորների. այս դիմադրությունը հեշտությամբ կարող է մեծանալ և դառնալ օտարյերկրյա կապիտալի դեմ ուղղված վտանգավոր միջոցներ: Արմատապես հեղափոխականանում են տնտեսական հին հարաբերությունները, խախտվում են «արտապատմական ազգերի» հազարամյա հողային մեկուսացումը, նրանք քաշվում են կապիտալիստական հորձանքի մեջ: Ինքը, կապիտալիզմը նվաճածներին քիչ-քիչ միջոցներ ու հնարներ է տալիս ազատագրվելու համար: Յեվ նրանք հրապարակ են մղում այն նպատակը, վորը մի ժամանակ յեվրոպական ազգերին ամենաբարձրն էր թվում—միասնական ազգային պետությունը, իբրև տնտեսական ու կուլտուրական ազատության միջոց: Անկախության այս շարժումը յեվրոպական կապիտալին սպառնում է շահագործման այն մարզերում, վորոնք ամենից ավելի արժեքավոր են նրա համար և վորոնք ամենափայլուն հեռանկարներ են խոստանում, և յեվրոպական կապիտալը կարող է այնտեղ իր գերիշխանությունը պահպանել՝ մշտապես իր զինվորական ուժերը շատացնելով միայն»:



Սրան պետք է ավելացնել, վոր իմպերիալիզմը վոչ միայն նոր հայտնագործված, այլև հին յերկրներում էլ տանում է դեպի աննեկսիաներ, դեպի ազգային ճնշման սաստկացում և, հետևաբար, նաև դեպի դիմադրության սրումն: Իմպերիալիզմի կողմից քաղաքական ռեակցիան սաստկացնելու դեմ առարկելով՝ Կաուցկին ստվերի մեջ է թողնում այն, հատկապես էական հարցը, թե անհնարին է միանալ օպորտյունիստների հետ իմպերիալիզմի դարաշրջանում: Աննեկսիաների դեմ առարկելով՝ նա իր առարկություններին այնպիսի ձև է տալիս, վոր ամենաքիչ վիրավորական չէ օպորտյունիստներին և ամենից ավելի դյուրին է ընդունել սրանց համար: Նա դիմում է անմիջաբար գերմանական լսարանին և, այնուամենայնիվ, մթագնում է ամենակարևոր ու հրատապ խնդիրը, վոր, որինակ՝ Էլզաս-Լոտարինգիան Գերմանիայի կատարած աննեկսիան է: Կաուցկու «մտքի այս թեքումը» գնահատելու համար առնենք մի որինակ: Յենթադրենք ճապոնացին դատապարտում է ամերիկացիների կողմից Ֆիլիպյան կղզիներն աննեկսիայի յենթարկելը: Հարց է տրվում, թե արդյոք շատե՞րը կհավատան, վոր այս արվում է դեպի աննեկսիաներն ընդհանրապես թշնամաբար վերաբերվելու պատճառով և վոչ թե այն պատճառով, վոր, ինքը, ճապոնացին է ցանկանում Ֆիլիպյան կղզիներն աննեկսիայի յենթարկել: Յեվ արդյոք հարկ չի՞ լինիլ ընդունելու, թե ճապոնացու «կռիվն» ընդդեմ աննեկսիաների կարելի յե անկեղծ ու քաղաքականապես ազնիվ համարել բացառապես այն դեպքում, յեթե նա ըմբոստանում է Ճապոնիայի կողմից Կորեյան աննեկսիայի յենթարկելու դեմ, յեթե նա պահանջում է, վոր Կորեյան Ճապոնիայից անջատվելու ազատություն ունենա:

Կաուցկու իմպերիալիզմի թե թեորիական ու թե տնտեսական վերլուծությունը, ինչպես և իմպերիալիզմի քաղաքական քննադատությունը տոգորված են մարքսիզմի հետ բացարձակապես անհաշտելի մի այնպիսի վոգով, վոր մթագնում և հարթում են ամենից արմատական հակասությունները, մի ձգտումով, վորի նպատակն է, ինչ գնով ուզում է լինի, պաշտպանել խորտակվող միությունը այն օպորտյունիզմի հետ, վոր գոյություն ունի յեվրոպական բանվորական շարժման մեջ:

(ԼԵՆԻՆ—Իմպերիալիզմը իբրև կապիտալիզմի նորագույն էտապ.
Գլ. 10-ից ՀԱՏՎԱԾՆԵՐ)

Յեզրափակում.—Յեթե մենք հանրագումարի բերենք այն ամենը, ինչ վոր ասվեց իմպերիալիզմի մասին, կարող ենք ասել, վոր «իմպերիալիզմը կապիտալիզմի զարգացման այն աստիճանն է, յերբ կազմակերպվեց մոնոպոլիաների և ֆինանսական կապիտալի տիրապետությունը, աչքի ընկնող նշանակություն ձեռք բերեց կապիտալի արտահանումը, աշխարհի բաժանումն սկսվեց տրեստների միջև և ամբողջ յերկրագնդի բաժանումը վերջացավ խոշորագույն կապիտալիստական յերկրների միջև (Լենին. «Իմպ. իբրև կապիտալիզմի նորագույն էտապ» աշխ.):

Ի. Ստալինը Լենինի բնորոշած «Մեռնող կապիտալիզմի» յերեք ամենից կարևոր և հիմնական ներհակություններ է մատնանշում, վորն անհրաժեշտ է ընդգծել և դրանով յեզրափակել այս գլուխը:

**Առաջին ներհակություն**—*կապիտալի և աշխատանքի մեջ գոյություն ունեցող ներհակությունն է:*

*Իմպերիալիզմը արդյունաբերական յերկրներում գոյություն ունեցող մոնոպոլիստական տրեստների և սինդիկատների, բանկերի և ֆինանսական օլիգարխիայի ամենահզոր լինելը կնշանակե: Այս ամենահզոր ուժի դեմ բանվոր դասակարգի կողմից գործադրվող կռվի սովորական յեղանակները — արհեստակցական միությունները ու կոոպերատիվները, պարլամենտական կուսակցությունները ու պարլամենտական պայքարը — միանգամայն անբավարար դուրս յեկան: Կամ քեզ հանձնիր կապիտալի վողորմածության, ապրիր առաջվա նման և ընկիր ցած կամ թե զինվիր նոր զենքի—այսպես է հարցը դնում իմպերիալիզմը պրոլետարիատի միլիոնավոր մասսաների առաջ: Իմպերիալիզմը մոտեցնում է բանվոր դասակարգին հեղափոխության:*

**Յերկրորդ ներհակություն.**— *Սա զանազան ֆինանսական խմբակցությունների և իմպերիալիստական պետությունների միջև տեղի ունեցող պայքարի ստեղծած ներհակությունն է՝ հում նյութերի աղբյուրներ և ոտար հողամասեր գրավելու համար: Իմպերիալիզմը կապիտալի արտածումն է դեպի հում նյութերի աղբյուրները, կատաղի պայքարը այդ աղբյուրներին միահեծան տիրելու, պայքար մի անգամ արդեն բաժանված աշխարհը վերաբաժանելու համար, պայքար, վոր մղվում է կատաղաբար նոր ֆինանսական խմբակցությունների և պետությունների կողմից «արևակի տակ» տեղ ունենալու համար ընդդեմ հին խմբակցությունների և պետությունների, վորոնք ամուր պահում են իրենց հափշտակածը: Այս կատաղի պայքարը, վոր տեղի ունի կապիտալիստների զանազան խմբակցությունների մեջ, նշանակալից է այն տեսակետից, վոր նա վորպես անխուսափելի տարր իր մեջ կրում է իմպերիալիստական պատերազմները, պատերազմները գրավելու համար ուրիշների տերիտորիաները: Այս հանգամանքն էլ իր հերթին նշանակալից է այն տեսակետից, վոր նա փոխադարձաբար թուլացնում է իմպերիալիստներին, թուլացնում է ընդհանրապես կապիտալիզմի դիրքերը, մոտեցնում է պրոլետարական հեղափոխության վարկյանը, և տանում է դեպի այդ հեղափոխության գործնական անհրաժեշտությունը:*

**Յերրորդ ներհակություն.**—*Սա «քաղաքակրթված» մի բուռ տիրապետող ազգերի և աշխարհիս հարյուրավոր միլիոն գաղութային և հպատակ ժողովուրդների մեջ գոյություն ունեցող ներհակությունն է: Իմպերիալիզմը ամենալկտի շահագործումն է, ամենաանմարդի կեղեքումը լայնածավալ գաղութների և հպատակ յերկրների բազմամիլիոն ազգաբնակության: Քամել վերջին հյութերը—ահա այդ շահագործման, այդ բռնության նպատակը: Բայց շահագործելով այդ յերկրներին, իմպերիալիզմը հարկադրված է նույն տեղերում կառուցել յերկաթուղագծեր, հիմնել ֆաբրիկաներ և գործարաններ, արդյունաբերական և առևտրական կենտրոններ: Պրոլետարական դասակարգի և տեղական մտավորականության հանդես գալը, ազգային ինքնագիտակցության արթնացումն ու ազատագրական շարժման ուժեղացումը—սրանք են այդ «քաղաքականության» անխուսափելի հետևանքները: Հեղափոխական շարժման ուժեղացումը բոլոր գաղութներում և հպատակ յերկրներում առանց բացառության ակներև կերպով այդ է վկայում: Այդ հանգամանքը պրոլետարիատի համար կարևոր է այն տեսակետից, վոր հիմնովին*



*քայքայում է կապիտալիզմի դիրքերը՝ իմպերիալիզմին ռեզերվ ծառայող գաղութները և հպատակ յերկրները պրոլետարական հեղափոխության ռեզերվ դարձնելով»:*

## 10. Կապիտալիզմի կործանումը յեվ կոմունիզմին անցնելու անխուսափելիությունը

*Այն ամենը, ինչ վոր ասվեց վերևում իմպերիալիզմի մասին, անհրաժեշտաբար մեզ պետք է բերեն մի յեզրակացության, այն է, վոր այդ հակասությունները, վորոնք ջլատում են կապիտալիզմը, վաղ թե ուշ պետք է պայթյունի հասցնեն,* **կործանելով կապիտալիզմը իբրև արգելք հասարակության և արտադրողական ուժերի հետագա զարգացմանը:**

*Արտադրության կենտրոնացում սակավաթիվ մարդկանց ձեռքում, մի խումբ ֆինանսիստների սահման չճանաչող օլիգարխիան, արտադրության տեխնիկայի բարձր աստիճանի հասցնելը, արտադրության պրոցեսների և կառավարչության նոր կազմակերպությունը—արտադրության ղեկավարությունը բաժանելով առանձին անհատների վրա ունեցած իրավունքից—նախադրյալներ է ստեղծում մասնավոր սեփականության վոչնչացման, արտադրության կազմակերպության և բաշխման գործը արտադրող հասարակության ձեռքը հանձնելու և պլանային տնտեսություն ստեղծելու:*

*Այդ ուժն ստեղծվում է հանձինս բանվոր դասակարգի, վոր կապիտալիզմի ստեղծած նոր պայմաններում համակենտրոնանալով և կապիտալիզմի վողջ ծանրությունը իր ուսերի վրա կրելով հասունանում է նոր հասարակության* **սոցիալիզմի-կոմունիզմի համար: Այսպիսով** *հասարակության հետագա զարգացումը հնարավոր է միայն կապիտալիզմի կործանումով և նոր պլանային տնտեսության ստեղծումով, կոմունիստական սկզբունքների կիրառմամբ: Վորքան լավ կազմակերպված կլինի բանվոր դասակարգն ու նրա ավանգարդ կոմկուսը, վորքան շուտ կհաջողվի նրան կտրել բուրժուազիայի ազդեցությունից մանր-բուրժուական շերտերը և իր կողմն անցկացնել, վորքան ուժեղ կլինի դիմադրական ուժը գաղութներում և հետամնաց յերկրներում, սկսված ազգային ազատագրական շարժումը զարգացնելու բուրժուազիայի և ֆեոդալիզմի մնացորդների դեմ և պրոլետարական հունն ուղղելու և վորքան անհնարին կդառնա բուրժուազիայի հետագա տիրապետությունը և նրա դիմադրական ուժը, այնքան շուտ կպատռվի կապիտալիզմի շղթան մեկ կամ մի քանի յերկրներում, այնքան շուտ և արագ կերպով պրոլետարիատին կհաջողվի խորտակել կապիտալիզմը, ստեղծել* **պրոլետարիատի դիկտատուրան** *և ձեռնարկել կոմունիստական հասարակության կառուցմանը:*

*Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը Ռուսաստանում և ԽՍՀՄ հաջողությունները սոցիալիզմի կառուցման ֆրոնտում—այդ արդեն կոմունիստական հեղափոխության սկիզբն է, կապիտալիզմի կործանման, սոցիալիզմի կառուցման սկիզբը միջազգային մասշտաբով:*

*«Համաշխարհային իմպերիալիզմի սիստեմը, նրա հետ միասին նաև կապիտալիզմի մասնակի կայունացումը (ստաբիլիզացիան) մաշվում-քայքայվում է զանազան ծայրերից, իմպերիալիստական պետությունների միջև յեղած հակասություններից ու կոնֆլիկտներից, գաղութներում պայքարի յելնող միլիոնավոր մասսաների կողմից, մայր յերկրների (մետրոպոլիանե-*

## ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

Ներածության ընթացքում կատարվող ընդհանրացումները հետապնդում եյին գլխավորապես մի նպատակ, պատմական զարգացման թելով սովորողներին տանել դեպի իմպերիալիզմ. դեպի արդիականություն, վորը կազմում է դասընթացի հիմնական բովանդակությունն ու մեխը: Այդ իսկ պատճառով իբրև ներածական առաջադրության տալով ֆինանսական կապիտալի զարգացումը և «իմպերիալիզմը վորպես կապիտալիզմի նորագույն և վերջին շրջան»՝ նպատակ ենք ունեցել ուսանողության տալ հիմնական բանալի արդիականությունն ըմբռնելու, վորպիսի հանգամանքը անհրաժեշտ դարձրեց պլանի ավելի ընդարձակ և մանրամասն կազմումը: Ներածական առաջադրության միջոցով տալով սկզբունքային գիծը դիրքավորում, պլանում մատնանշված առանձին գլուխներն ու յենթաթեմաները պետք է մանրամասն մշակել, համաձայնեցված գրականության ոժանդակությամբ: Մշակումը պետք է կատարվի կոնսպեկտի ձևով բանավոր ստուգման ժամանակ ոգտագործելու համար, իսկ վերստուգողական հարցերին՝ պատասխանել գրավոր:

Իմպերիալիզմի շրջանի եկոնոմիկայի և հետ-պատերազմյան կապիտալիզմի մանրամասն մշակումը ըստ ծրագրի կատարվելու յե 2-րդ և 3-րդ կուրսերում կապված քաղաքատնտեսության և խորհրդային եկոնոմիկայի հետ:

Տրված գրականություն—աղբյուրները չճարելու դեպքում, ուսանողը պատրաստում է աշխատանքը սույն ներածական առաջադրության ոգնությամբ:



## ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 3

# ԱՆԳԼԻԱՆ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ՇՐՋԱՆՈՒՄ

(ՆԵՐԱԾԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ԱՌԱՆՑ ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ)

## Ծ Ր Ա Գ Ի Ր

1. Անգլիայի տնտեսական զարգացումը և կարգերը: Բուրժուական միապետություն Անգլիայում պարլամենտ, դեմոկրատիկ ռեֆորմներ: Կուսակցությունները՝ պահպանողականներ և լիբերալ: Իռլանդական հարցը:

2. Բանվորական շարժումն իմպերիալիզմի շրջանում: Տրեդյունիոնիզմը և նրա բնույթը, միությունների և գործադուլների ազատություն, խառն միություններ և միջնորդ դատարաններ, աշխատավարձի շարժական «սկալա», նոր տրեդյունիոնիզմ: Սոցիալիստական պրոպագանդ և սոցիալիստական խմբակներ: Սոցիալ դեմոկրատական ֆեդերացիա: Անկախ բանվորական կուսակցության կազմակերպումը: Պարլամենտական բանվորական կուսակցությունը և նրա կազմակերպչական կառուցվածքը:

Բանվոր դասակարգի քաղաքական կազմակերպության թուլությունը:

Ոպորտյունիզմ և նրա պատմական պատճառները: Բրիտանական կոմ-կուսը:

## ԱՆԳԼԻԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՅԵՎ ԿԱՐԳԵՐԸ

Անգլիան գտնվում է Ատլանտյան ովկիանոսում և գրավում է Արևմտյան Յեվրոպայի հյուսիս-արևմտյան կողմում ընկած Բրիտանական կղզին: Նա բաղկացած է յերեք մասից՝ Իռլանդիայից, վորը նույնպես առանձին կղզի յե, Շոտլանդիայից և բուն Անգլիայից (կղզու հարավային մասը): Մայր յերկրով և գաղութներով միասին Անգլիան կոչվում է Մեծ Բրիտանիա: Վերջինս ունի տիրապետության 7 տիպեր, գաղութներ (Հնդկաստան և այլ տեսակի գաղութներ, ինքնավար գաղութներ (դոմինիոններ), որ.՝ Ավստրալիա, Կանադա և այլն: Այս հաշվով Անգլիան այժմ ունի 35`,783 հազար քառ. կիլոմետր տարածություն և 463,945 հազար բնակչություն, այսինքն յերկրագնդի ազգաբնակության ամբողջ թվի $\frac{1}{4}$-ը:

Անգլիան աշխարհագրական տվյալներով, բնական հարստություններով և կլիմայական դիրքով գտնվելով բարենպաստ պայմաններում, դեռ շատ վաղ կարողացել է դառնալ առաջավոր յերկիր և տիրանալ մեծ հարստությունների: Սկսած 15 և 16-րդ դարերից, նա արյունահեղ պատերազմների և «տընտեսական ներգործման» ճանապարհով կարողացել է ձեռք գցել աշխարհի բոլոր մասերում ցրված այդ յերկրամասերը:

«Կապիտալի կուտակումը հրով և սրով գրված մարդկային տարեգրություն է», ասում է Մարքսը: Անգլիան այդ տեսակետից կարող է դասական որինակ հանդիսանալ: Անգլիայի հզորությունն այս ճանապարհով իր գագաթնակետին հասավ 19-րդ դարի սկզբներից և նրան դարձրեց արդեն յեվրոպական և ամերիկյան բոլոր յերկրների գլուխը: Սկսած արդյունաբերական

հեղաշրջման եղանակից, վորը հաջորդեց ագրարային հեղաշրջմանը, Անգլիան պատռելով արտադրական հին հարաբերությունները— համայնքային հողագրկման և նրանց քայքայման ուղիներով ֆեոդալական բնույթից անցնում ե կապիտալիստականի, տնտեսական նախադրյալների հետ, ստեղծելով վարձու բանվորների վիթխարի բանակ, հողազրկվող, արտատեղիների վերածված վայրերից հեռացող գյուղացիության հիմնական մասսաների հաշվին:

Հետզհետե սկսեցին քայքայվել համքարային, նեղ և միջնադարյան ձեռնարկությունները, տեղի տալով գործարանային տնտեսությունների: Համաշխարհային շուկայի, առևտրական կապերի զարգացման և տեխնիկական գյուտերի ասպարեզում կատարվող հսկայական առաջընթացի պայմաններում, կապիտալի նախնական կուտակման (տես ներածական դրույց, Ա. Թեմա) այս դասական յերկիրը ստեղծեց նոր հասարակակարգ— կապիտալիստական հասարակակարգ, բուրժուազիայով և պրոլետարիատով:

Անգլիայի վերջին դարերի պատմությունը հիմնականում կարելի յե բաժանել յերեք եղանակների՝ 1) կապիտալի կուտակման, 2) արդյունաբերական հեղաշրջման անցողակի և 3) ժամանակակից ձևավորված ու վերջնավորված կապիտալիստական եղանակների: Այդ յերեք եղանակների բնորոշ առանձնահատկությունը և հիմնականն այն ե, վոր Անգլիայի տնտեսական-քաղաքական կյանքը ընթացել ե աստիճանական, բայց յերբեմնակի սոցիալական մեծ պոռթկումներով, տանելով նրան ֆեոդալիզմից դեպի կապիտալիզմը: Այսպիսով Անգլիան մինչև 19-րդ դարի յոթանասնական թվականների կեսը իր տնտեսական զարգացմամբ ամբողջ աշխարհի բոլոր յերկրներից առաջ եր: Կապիտալիզմի առանձնապես արագ աճումը կատարվեց 50-ական և 60 թվականների շրջանում: Այդ քսան տարիների ընթացքում յերկրի արդյունաբերությունն աճեց 3-4 անգամ: Բամբակի վերամշակումը 40-ական թվականներին 473 միլ. ֆունտ-ստեռլինգից 1870 թվին բարձրացավ մինչև 1,416 միլ. ֆ-ի: Այդ նույն ժամանակաշրջանում քարածխի արդյունաբերությունը 34,0 միլ. տոննից բարձրացավ 110,4 միլ. տոննի: Չուգունի հալեցումը՝ 1,3 միլ. տոննից — 5,9 միլ. տոննի: Ապրանքների արտահանումը, վոր առաջին տասնամյակում (1840-1850 թ.) 57,4 միլ. ֆունտ ստեռլինգ եր կազմում, 1861-1870 տասնամյակում աճեց մինչև 166 միլ. ֆունտ ստեռլինգի: Այս պայմաններում անգլիական ապրանքների հետ վոչ մի յերկրի չեր հաջողվում մրցել: Անգլիական ապրանքների արագ տարածմանը մեծապես նպաստում եր նաև հսկայական գաղութներ և ազդեցության ընդարձակ շրջաններ ունենալու հանգամանքը, ուր առանց արգելքի նա կարողանում եր վաճառել իր ապրանքը: Այդ մենաշնորհյալ վիճակը մեծացրել եր նրա մասնակցության բաժինը համաշխարհային առևտրի և արդյունաբերության մեջ: Այսպես, որինակ, ծովային տեղափոխությունների 75 %-ը բռնում եյին անգլիական նավերը, բամբակագործական ապրանքների համաշխարհային առևտրի մեջ Անգլիայի մասնակցությունը 1860 թ. կազմում եր համաշխարհային առևտրի նույնպես 75 %-ը: Իրերի այս ընթացքը և հարստության հեքիաթային կուտակումը ուղղակի արբեցրել եր անգլիական բուրժուազիային, այնպես վոր մեր մատնանշած ժամանակաշրջանում (1854-1870) 300-ից — 1000 ֆունտ ստեռլինգ ունեցողների թիվը 61 %-ով ավելացավ, իսկ հազարից ավելի ստեռլինգ ունեցողների թիվը 63 %-ով: Մինչդեռ այս նույն ժամանակաշրջանում անգլիական պրոլետարիատը վողորմելի վիճակում եր ապրում. շահագործման ճնշման տակ մինչև



դնելուն խոնարհվելով: Վոչ այլ վոքի, քան Կ. Մարքսի գրչին ե պատկանում այն ցնցող պատկերը, վոր նա տալիս ե «Կապիտալի» 1-ին հատորում անգլիական կապիտալիզմի տիրապետության իբրև նմուշ, այն կապիտալիզմի, վոր «անցնում եր հաղթական կերպով յերեխաների դիակների, ուժից վեր աշխատանքից և աղքատությունից անժամանակ պառաված կանանց կռացած մեջքերի, բանվորների ուժասպառ յեղած մարմինների վրայով, վորոնք լցվում եյին տաժանակիր աշխատանքի առաջացրած արյունոտ քրտինքի շիթերով: Անասելի յերկար բանվորական որ, մինչև իսկ յերեխաների համար միշտ և ամենուրեք 12 ժամ, վոչ բարձր աշխատավարձ, աշխատանքի զզվելի պայմաններ ֆաբրիկայում, կեղտոտ, խոնավ և անոդանցք բնակարաններ հաճախ նկուղներում և մառաններում, վողորմելի զգեստ և աղքատիկ կերակուր— ահա լայն բանվորական մասսաների բաժինն անգլիական կապիտալիզմի ծաղկման այդ շրջանի»:

## ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՄԻԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

Անգլիական բուրժուազիայի մենաշնորհը համաշխարհային շուկայում և նրա հեքիաթային հարստացումը մի կողմից, լայն բանվորական մասսաների խղճուկ դրությունը մյուս կողմից, — ահա այն յերկու բևեռները, վորոնք բնորոշում են Անգլիայի կյանքը 19-րդ դարի 3-րդ քառորդում: Անգլիայի այդ տնտեսական դրությունը իր անմիջական արտահայտությունն եր գտնում Անգլիայի քաղաքական կարգերում: Անգլիան սահմանադիր միապետություն ե. այսպես կոչված ամենահին պարլամենտական յերկիրը: Անգլիական պարլամենտը, սկսած 14-րդ դարից, կազմված եր 2 պալատից— առաջին՝ լորդերի պալատը, վորի անդամները ժառանգական եյին. հաջորդը միշտ լինում եր անդրանիկ վորդին: Ընդհանուր առմամբ, լորդերը ֆեոդալական բարոնների ժառանգներն եյին, թեյեվ թագավորին եր վերապահված այս կամ այն աչքի ընկնող անձնավորության լորդի տիտղոս շնորհելու իրավունքը: Լորդերի պալատը հանդիսանում եր հողատիրական արիստոկրատիայի շահերի ջերմեռանդ պաշտպանը: Յերկրորդ՝ ստորին—համայնքների պալատը— կազմված եր կոմսությունների և քաղաքների ներկայացուցիչներից: Նույնիսկ 19-րդ դարի 20-ական թվականների միջնադարյան ընտրական ձևը իր ուժի մեջն եր: Թեև մեծ հեղափոխության ժամանակ (17-րդ դար) ընտրական ձևը փոխվեց, ամբողջությամբ վերացվեց լորդերի պալատը և թագավորական իշխանությունը, սակայն 1660 թ. ռեստավրացիայի ժամանակ Ստյուարտների ձեռքով վերահաստատվեց հին կարգը: Առաջին խոշոր և նկատելի փոփոխություններ կատարվեցին միայն 19-րդ դարի 30-ական թվականներին և այնուհետև արդյունաբերական բուրժուազիայի զարգացման հետևանքով Անգլիայի վարչաձևը յենթարկվեց թեև չափազանց դանդաղ, բայց հարատև փոփոխությունների, վորի ընդհանուր արդյունքն այն յեղավ, վոր թագավորական իշխանությունը համարյա թե ամբողջությամբ կորցրեց իր առաջին իրավունքները, մնալով, ինչպես ասում են, Անգլիայի «առաջին քաղաքացին»: Նույն համեմատությամբ սահմանափակվեց նաև լորդերի պալատի իրավունքը և ամբողջ որենսդրությունն ու սահմանադրության կիրառումը վերապահվեց համայնքների պալատին, վոր գործում ե պատասխանատու մինիստրության միջոցով, ձևական տեսակետից նշանակվելով և արձակվելով թագավորի կողմից, սակայն փաստորեն անգլիական կառավարական կաբինետները սկսած պահպա-

նողական կուսակցությունից, վերջացրած բուրժուազիայի ձախ թևից հանդիսացող այսպես կոչված բանվորական կուսակցության կառավարությունից, փաստորեն հանդիսանում են ֆինանսական կապիտալի ամենաբնորոշ և տիպական գործակալները: Յեվ նման պայմաններում յերկրի թե ներքին և թե արտաքին քաղաքականության իսկական կիրառողը հանդիսանում ե կաբինետը, վոր ներկայացնում ե մի բուռն ֆինանսիստների կոմիտե: Անգլիական գործող սահմանադրությունը, վոր ավելի քան մի ամբողջ 100–ամյակի շրջանում հրապարակված և կատարված ռեֆորմների հավաքածուն ե, իր վրա կրում ե տրադիցիայի և կոնսերվատիզմի խոր կնիքը: Բավական ե մատնանշել, վոր Անգլիայում կանայք ձայնի իրավունք ստացած են միայն 18– 19 թվերին:

## ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ՅԵՎ ԼԻԲԵՐԱԼ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Միջազգային շուկայի իրադարձությունները անդրադառնալով անգլիական տնտեսական կյանքի վրա՝ չեյին կարող չազդել նաև հասարակական կյանքի վրա:

Այդ ազդեցությունը յերևան յեկավ թե պահպանողականների և թե լիբերալների շարքերում:

Պահպանողականների ռազմաշունչ արտաքին քաղաքականությունն ավելի քան համապատասխանում եր ժամանակին: Գաղութներում իրենց տնտեսական գերիշխանությունը ապահովելու համար՝ անգլիական բուրժուազիան պետք ե մրցեր վոչ թե իրենից թույլ, այլ հավասար, յերբեմն եվ գերազանցող ախոյանի հետ: Պացիֆիզմն ու ազատ մրցակցությունն իր յերբեմնի դերը խաղալ չեր կարողանում: Պահպանողական կուսակցությունը հասկանալով այդ դրությունը և հաշվի առնելով, վոր բուրժուազիան ու մանր բուրժուական տարրերը գնալով ավելի շահագրգռված են լինելու իմպերիալիստական քաղաքականությամբ՝ աշխատում ե պարլամենտական պայքարի ընթացքում հնարավորության չափ ավելի ցայտուն ցուցադրել իր իմպերիալիստական ձգտումները:

Սակայն ընտրական ռեֆորմներից հետո, մասսան իբրև ձայն տվող, մեծ արժեք ստացավ յերկու կուսակցությունների համար ել: Պահպանողականները, մասսային իրենց կապելու դիտավորությամբ, առաջադրեցին մի շարք ռեֆորմներ և ուշադրություն դարձրին սոցիալական հարցի վրա: Նրանց հաջողվեց անցկացնել արդյունաբերության տերերի և բանվորների իրավական հավասարության օրենսգիծը: Այս ճանապարհով նրանք կարողացան վորակյալ բանվորների և մանր բուրժուազիայի մի մասն իրենց կապել:

Պահպանողական կուսակցության յերիտասարդ անդամ Չերչիլը գտնում եր, վոր ընտրական պայքարում հաղթող հանդիսանալու համար անհրաժեշտ ե կուսակցությունը մասսայական դարձնել: «Կուսակցությունը պետք ե ժողովրդից լինի, անհրաժեշտ ե ժողովրդին հետաքրքրել կուսակցության քաղաքականությամբ... Ժողովուրդը պետք ե գիտակցի, վոր ինքը պասսիվ ձայնատվությունից ավելին կարող ե անել»:

Այս խմբակը ցանկանում եր կուսակցությունը «դեմոկրատացնել»: Ամենաեյականն այն ե, վոր Չերչիլի սկզբունքների մեջ մտնում եյին լիբերալների սկզբունքները, սակայն կենտրոնական քաղաքականությունը դառնում ե գաղութային քաղաքականությունն ու միլիտարիզմը:



Շուտով, գրեթե բոլոր քաղաքներում կազմակերպվեցին պահպանողական ասսոցիացիաներ, վորոնք կուսակցության համար կազմակերպական խոշոր նվաճումներ եյին: Բուրժուական և մանր բուրժուական տարրերից շատերը մտան այդ կազմակերպությունների մեջ:

Համաշխարհային տնտեսական իրադարձությունները անդրադարձան նաև լիբերալիզմի վրա: Յեթե առաջ հնարավոր եր համարվում ազատ մրցմամբ գերիշխանություն ունենալ միջազգային շուկայում, 19–րդ դարի վերջին տասնամյակներում դա այլևս անհնար եր: Հաճախակի կրկնվող տնտեսական ճգնաժամերը սովորեցրին, վոր լիբերալների շարքում եվս առաջ գան գաղութային քաղաքականության ռազմաշունչ կողմնակիցներ, վոր պահպանողականների և նրա խմբակի մեջ առաջացնում ե նոր ռազմաշունչ տրամադրություններ, վորոնք շատ հաճելի եյին նոր պահպանողականներին:

Ահա ինչու պարլամենտական լիբերալների շարքերում առաջացած ճեղքվածքն անմիջապես արձագանք գտավ նաև պարլամենտից դուրս: Ունիոնիստներն աստիճանաբար մոտենում եյին պահպանողականներին թե ներքին և թե արտաքին քաղաքականության հարցերում:

Այսպիսով արդեն իննսունական թվականներից պահպանողական կուսակցությունը կառավարական կուսակցություն ե դառնում, իսկ լիբերալները ոպպոզիցիոն: 95 թվի ընտրությունների ժամանակ կառավարականները 441 տեղ ստացան, իսկ լիբերալները ընդամենը 175 (մյուս ոպպոզիցիոն խմբակների հետ միասին 259):

1895 թ. կառավարության մեջ Չեմբերլենը ստանձնեց գաղութների մինիստրի պորտֆելը: Իսկ 1897 թվին, Վիկտորիա թագուհու հոբելյանի ժամանակ, յերբ Լոնդոն եյին հավաքվել գաղութների ներկայացուցիչները, Չեմբերլենն առաջադրեց գաղութների և մայր յերկրի կազմակերպական հարաբերության մի նոր, յուրահատուկ ձևի իրագործումը և բրիտանական իմպերիալիզմի պաշտոնական կիրառումը:

Իմպերիալիզմը Անգլիայում հասարակական իդեա սկսեց դառնալ 80-ական թվականներից, նույնիսկ կազմվեց «Իմպերիալիստական ֆեդերատիվ Լիգա»—Միությունը, վորն ամենուրեք համախոհներ եր գտնում: Իննսունական թվականների հենց սկզբից իմպերիալիստական գաղափարի ամենաջերմ պաշտպանը հանդիսացավ Չեմբերլենը: Իմպերիալիստները ծրագրում եյին «ֆեդերատիվ կայսրությունը» դարձնել մի այնպիսի միաձույլ տնտեսական կազմակերպություն, վորտեղ ոտարերկրյա արտադրությունը չկարողանա շուկա գրավել: Կենտրոնական հարցը պետք ե լիներ պրոտեկցիոնիզմն ու մաքսային դաշնակցությունը, այնպես, ինչպես դա տեղի ունեցավ Հյուսիսային Գերմանիայի Միության ժամանակ: Դրանից դատ անհրաժեշտ եյին համարում միլիտարիզմի ուժեղացումը, առանց վորի անհնար կլիներ նոր գաղութներ ձեռք բերել: Մի խոսքով՝ Չեմբերլենի քաղաքականության հիմնաքարը ազգային արդյունաբերության համար մենաշնորհային դրությունն եր վորքան հնարավոր ե ավելի լայնածավալ տերրիտորիայի վրա:

Իմպերիալիզմն իր հերթին քայքայիչ ազդեցություն ունեցավ լիբերալ կուսակցության համար: Մանավանդ յերբ ունիոնիզմն ու իմպերիալիզմը գրեթե համաձուլված եյին: Լիբերալներից շատերը հրաժարվեցին գլադստոնյան պացիֆիզմից և մոտեցան մարտական կուսակցությանը, վորը պետք ե փոխա–

լինել «Հոմրուլ-բիլլը» իմպերիալիզմով։ Անգլիական բուրժուազիան գնալով ավելի իմպերիալիստական է դառնում և նրա քաղաքական ղեկավարը հանդիսանում է Չեմբերլենը։

Լիբերալների պառլամենտական ֆրակցիայում առաջացավ ճեղքում, վորի շարժառիթը Իռլանդիային ինքնավարություն տալու օրինագիծն եր։ Գլադստոնը համամիտ եր, վոր իռլանդական ազգայնականների պահանջներն իրագործվեն և յերկիրն ունենա իր ինքնավար օրգանները—(այդ օրինագիծը կոչվում եր Հոմրուլ-բիլլ)։ Գլադստոնի համախոհներից շատերը համաձայն չլինելով նրա քաղաքականության՝ կուսակցությունից հրաժարվեցին և կազմեցին լիբերալ-ունիոնիստների խմբակը, վորի գլուխ կանգնած եր նախկին լիբերալ Չեմբերլենը։

Այնուամենայնիվ լիբերալների կուսակցությունը նույնպիսի բուրժուական կուսակցություն է ու պաշտպանում է նրա (բուրժուազիայի) շահերը։ Ինչպես ասացինք, ազատ մրցումն այլևս չեր բավարարում։ Անգլիական բուրժուազիան չեր կարող այլևս նրանով միջազգային շուկայի հեգեմոնիան իր ձեռքում պահել։ Դասակարգային շահը պահանջում եր նոր քաղաքականություն վարել։ Այս բանում լիբերալները բնավ յետ չմնացին. բավական է ասել, վոր համաշխարհային պատերազմի շրջանում կառավարության գլուխն եր կանգնած լիբերալների կուսակցության պարագլուխ Լլոյդ-Ջորջը։ Այս յերկու կուսակցությունները փոխն ի փոխ իրականացրել են իմպերիալիզմի քաղաքականությունը, մազաչափ անգամ չշեղվելով իրենց դասակարգի քաղաքականությունից։

## ԻՌԼԱՆԴԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Անգլիայի քաղաքական կյանքում խոշոր դեր է կատարել և բոլոր կառավարությունների ու կուսակցությունների պայքարի օբյեկտ հանդիսացել Իռլանդիայի հարցը, մինչև վոր վերջինս յերկարատև պայքարի հետևանքով միայն 1922 թվին ձեռք բերեց Իռլանդիայի մի մասի (հյուսիսային) անկախությունը, վոր ավելի շուտ ձևական բնույթ է կրում։ Իռլանդիայում ապստամբական յելույթները մշտապես անպակաս են յեղել։ Դեռ 40-ական թվականներին «յերիտասարդ իռլանդական կուսակցությունը նպատակ եր դրել զինված ապստամբության միջոցով ազատվել Անգլիայի լծից։ Յերբ ծագեց փետրվարյան հեղափոխությունը Ֆրանսիայում, իռլանդական ազգայնականները վողջունեցին հեղափոխությունը և խնդրեցին Ֆրանսիական ժամանակավոր կառավարության օգնել իրենց։ Միաժամանակ ապստամբեց իռլանդական գյուղացիությունը, սակայն անգլիական կառավարությունը ճնշեց դեռ չզարգացած ապստամբությունը հրով և սրով։

Թե այդ ժամանակ, թե դրանից առաջ, մանավանդ 46 թվի սովից հետո, բազմաթիվ իռլանդական գյուղացիներ գաղթեցին Ամերիկա։ Մնացածները հաճախ տեռորի եյին յենթարկում հողատերերին։ 50-ական թվականներին իռլանդական շարժումները կարծես քուն մտան, 60-ական թվականներին վերստին արթնանալու համար։

Հյուսիսային Ամերիկա գաղթած իռլանդացիները կազմակերպեցին գաղտնի հեղափոխական ընկերություններ, վորոնք ՖԵՆԻ եյին կոչվում։ Նրանք նպատակ եյին դրել ապստամբությամբ ազատվել Անգլիայից և Իռլանդիան



հանրապետություն դարձնել։ ՖԵՆԻ կազմակերպությունն յերկրի դժգոհ ու քաղցած գյուղացիների և ինտելիգենցիայի մեջ մեծ քանակությամբ համախոհներ գտավ։

Շարժումը դեռ չսկսած՝ դավաճանություն բացվեց։ Առանց դատաքննության շատերը ձերբակալվեցին և բանտերը լցվեցին (1865 թ.)։ Գյուղացիներն ել իրենց կողմից ուժեղացրին հրդեհելն ու տեռորը։

1867 թվին ֆենիները Ամերիկայից գործում եյին, բազմաթիվ սպաներ ու զինվորներ տեղափոխվեցին Իռլանդիա նոր ապստամբություն կազմակերպելու համար։ Նրանք պայթեցրին մի շարք մեծ շենքեր, վորոնց մեջ նաև մի խոշոր բանտ։

Քառասուն հազար կամավորներ, կազմված հողատերերից և այլ տականքներից, իրենց ծառայությունն առաջարկեցին անգլիական կառավարության—իռլանդական շարժումը ճնշելու համար։

Շարժումը հարկավ խեղդվեց։ Տրեդյունիոնները, վոր միակ կազմակերպությունն եյին, բողոքեցին անգլիական կառավարության գործադրած սոսկալի խստությունների դեմ։

Անգլիական օրենսդրությունը ամբողջությամբ հողատերերի կողմն եր։ Լիբերալ բուրժուազիան, Գլադստոնի ղեկավարությամբ, կարողացավ անցկացնել մի օրենք, ըստ վորի լենդլորդները իրավունք չունեյին ուժով քշել գյուղացիներին հողի վրայից և գյուղացուն տեղափոխվելու դեպքում պարտավոր եյին վճարել ծախքերը։ Պահպանողականները յերկու պալատներում ել մեծ աղմուկ բարձրացրին Գլադստոնի օրինագծի դեմ, մեղադրելով, վոր դա վտանգում է մասնավոր սեփականության սկզբունքը։

Թեև օրինագիծը անցավ, բայց նա չկարողացավ բավարարել իռլանդացիներին, վորովհետև նրա մեջ կար մի կետ, ըստ վորի յեթե կապալավարձն իր ժամանակին չվճարվեր, գյուղացին կվտարվեր գյուղից։ Օրինագծից կես տարի չանցած, 1000-ից ավելի գյուղացիներ, վորոնք կապալավարձ չեյին վճարել—քշվեցին հողերից։

Այդ ժամանակ մեծ չափերի հասան ագրարային «անկարգությունները» ու կառավարիչներին սպանելը։ Կառավարիչներից մեկն այն աստիճան անտանելի յեր, վոր ծառաներն ու բանվորները հրաժարվեցին նրա մոտ ծառայելուց, ուրիշներն ել չեյին համաձայնվում աշխատել։ Գյուղացիներն այնպես արին, վոր նա ստիպված յեղավ այդ վայրից հեռանալ։ Այդ անձնավորության անունը Բոյկոտ եր, դրանից ել ծագեց բոյկոտ հասկացողությունը։

Ագրարային «անկարգությունները», տեռորն ու շենքերի պայթեցումը սկզբում հանդիպեցին ռեպրեսիաների, սակայն Գլադստոնի կառավարությունը ստիպված յեղավ մի շարք նոր ռեֆորմներ մտցնել, վորոնցից ամենակարևորն այն եր, վոր կապալավարձը պիտի վորոշվեր հատուկ հանձնաժողովի միջոցով։

1884 թվին ռեֆորմի հետևանքով, իռլանդական ազգաբնակության ձայնի իրավունքը յեռապատկվեց, պայքարող տարրերը տարվեցին այս ռեֆորմով. սկսած հեղափոխական շարժումներն ել աստիճանաբար դանդաղեցին։

Սակայն իռլանդական հարցը չվերացավ և չլուծվեց բնավ։ Նա շարունակում է հուզել Անգլիայի քաղաքական մթնոլորտը մինչև օրս։ 1922 թվին Իռլանդիային տված ներքին «ինքնավարությունը» անգլիական բուրժուա-

դիայի խորամանկ քաղաքականության փայլուն նմուշն էր միայն, որը նպատակ ուներ ամեն կերպ իր կողմը թեքել տեղական բուրժուազիային և արիստոկրատիային:

Իռլանդիայի ազատագրման հարցը, ազատագրումը ոչ թե բուրժուական շրջանակներում, այլ իսկական ճամփով, պետք է կանգնի վաղը հաղթանակող պրոլետարիատի առաջ: Միայն սոցիալիստական հեղափոխությունը կարող է իսկական ազատություն տալ ոչ միայն Իռլանդիային, այլև Բրիտանական կայսրության լծի տակ տառապող բոլոր ժողովուրդներին:

## 2. Բանվորական շարժումն իմպերիալիզմի շրջանում

Անգլիայում, ուր բռնկվեց բանվորական առաջին մասսայական շարժումը՝ չարտիզմը, որ մի ամբողջ տասնամյակ և ավելի Անգլիայի ողջ հասարակական կյանքը լարված վիճակի մեջ էր պահում և որ նպատակ ուներ պրոլետարիատի ինքնուրույն դասակարգային կուսակցություն ստեղծել, 50-ական թվականների սկզբից մարեց և առանձին առաջնորդների ջանքերը՝ վերակենդանացնելու նորից շարժումը, հաջողություն չունեցան: Անգլիայում ծայր առավ քաղաքական կյանքից հեռանալու հետադարձ շարժում: Ընդհանուր անդորրություն տիրեց ամբողջ երկրում և վրա հասավ յուրատեսակ անտարբերության, թմրության մի շրջան, որը արդյունք էր կրկնից դուրս եկած անգլիական տնտեսության բուռն վերելքի: Մոնոպոլ դիրքեր գրավելով համաշխարհային շուկայում անգլիական չափազանց լավ կազմակերպված և շահագործման բոլոր ձևերին վարպետորեն ծանոթ բուրժուազիան հնարավորություն ուներ ձեռք բերած վիթխարի գերշահույթների հաշվից փշրանքներ նետել բանվոր դասակարգի, հատկապես նրա որակյալ խավի ձեռքը: Այսպես օրինակ՝ ջուլհակի շաբաթական աշխատավարձը, որ 1850 թվին 13 շիլինգ էր, 1860 թվին բարձրացավ 15 շիլինգի, ձուլիչի աշխատավարձը մի տասնամյակում ավելացավ 22 ½-ից—29 շիլինգի և այլն: Բացի այդ, հացի հռչակավոր օրենքների և դրսից արտահանվող հացի վրա դրված մաքսի վերացումով, այնուհետև «ազատ առևտրի» ռեժիմ հաստատվելու շնորհիվ, զգալի չափով ընկան ապրանքների և կենսամթերքների գները, այնպես որ նախկին աշխատավարձի չափը պահպանած բանվորները, որոնք կազմում էին անգլիական բանվոր դասակարգի մեծամասնությունը, կարող էին ավելի մթերքներ ձեռք բերել: Որքան Անգլիայի արդյունաբերության ապրած ծաղկման համեմատությամբ վատ էր և անբավարար անգլիական բանվորների վիճակը, այնուամենայնիվ, նա նախորդ շրջանի հետ համեմատած ավելի լավ էր և հարաբերականորեն ավելի բարձր, քան մյուս երկրներում:

Բանվորական վերնախավը այս նոր հանգամանքներն օգտագործեց իր գաղափարները քարոզելու և բանվորների «չլուսավորված» մասսաներն ինքնուրույն դասակարգային քաղաքականությունից դերծ պահելու համար: Այս շրջանում էր, որ հիմք դրվեց այսպես կոչված անգլիայի բանվոր դասակարգի հռչակավոր համաձայնողականությանը: Համաձայնողականության իդեոլոգիան, որն ամբողջությամբ առաջ էր տարվում բանվորական վերնաշերտի գլխավորությամբ, յեկավ դասակարգային կազմակերպված քաղաքական պայքարը շահագործողների դեմ փոխարինելու ռեֆորմիստական խաղաղ պրոպագանդայով:



Անգլիայի աչքի ընկնող բանվորական առաջնորդներից մեկը 60-ական թվականներին գրում էր. «Մի քանի տարի հետո աշխատանքի պատմության մեջ մենք մի նոր դարաշրջան բաց կանենք, մենք ձեռք կբերենք մեր տերերի լիակատար վստահությունը, կմտցնենք իրար մեր վեճերը հարթելու առաջին միջոց միջնորդ դատավարությունը, և որքան հնարավոր կլինի, մեր միությունները կզատենք գործադուլների հետ կապված ծախքերից և անհանգստություններից»: Եվ իրոք բանվորական այդ պայծառափայլ արիստոկրատիան իր ամբողջ քաղաքականությամբ և իր հռչակավոր «բանվորական» կառավարություններով փայլուն կերպով կատարեց և կատարում էր տերերին—կապիտալիստներին հաճոյանալու այդ պարտականությունը: Հենց վերևում մատնանշված պայմաններում էլ առաջ ընթացան անգլիական բանվորների արհեստակցական կազմակերպությունների աշխատանքները, որոնք բանվորների դասակարգային գիտակցությունը և տնտեսական պայքարի մարտական զենքերը փոխարինեցին փոխադարձ օգնության դրամարկղների և ապահովագրական ընկերությունների, գործադուլներին օգնելու, միության պառաված անդամներին կենսաթոշակ տալու, հիվանդության և մահվան դեպքերում օգնություն ցույց տալու քաղաքականությամբ: Այսպիսով բանվորների անդամակցական մուծումներից ստացված միջոցներից համաձայնողական այդ քաղաքականությունն օգնում էր իր հայրենի բուրժուազիային, թեթևացնելով վերջինիս «ծանր բեռը»: Իսկ 70-ական թվականներից սկսած համաձայնողականների պրակտիկան մի քայլ էլ առաջ գնաց: Հաստատվեց բանվորների աշխատավարձի այսպես կոչված շարժական «սկալա» (սանդուխ), որի էությունն այն էր, որ բանվորի աշխատավարձի չափը որոշվում էր նրա արտադրած ապրանքի շուկայի գնով: Ապրանքի գինը շուկայում բարձրանալիս բանվորներին հավելում էր տրվում, գներն իջնելիս նրանք էլ պարտավոր էին համաձայնել աշխատավարձի իջեցմանը: Ուրեմն բանվորի աշխատավարձը որոշվում էր ոչ թե նրան ապրուստի մինիմումով, կենսամթերքների և լայն սպառման առարկաների թանկությամբ, այլ տիրոջ ստացած շահույթների մակարդակով. այսպիսով բանվորի շահերը կապվում էին տիրոջ շահերի հետ:

Տրեդյունիոնիզմը և նրա բնույթը.—Անգլիական բանվորների կազմակերպական ձևը տրեդյունիոնն էր, որն իրենից ներկայացնում էր տեղական, միանգամայն ավտոնոմ մի կազմակերպություն, որ կառուցված էր նեղ արհեստակցական սկզբունքներով, չէր ընդգրկում լայն բանվորական մասսաների, միևնույն արտադրության մեջ աշխատող երկու տարբեր կատեգորիաներ (դիցուք շինարար. պատ շարողներ և վառարան շինողներ) չէին կարող միևնույն կազմակերպության մեջ լինել: Ընդունելությունը խիստ սահմանափակված և ռեգլամենտացիայի ենթարկված էր, բացի այդ, սահմանված էր բարձր անդամավճար, ըստ որում այս միությունները հանդիսանում էին որակյալ խավերի արհեստակցական կազմակերպություններ, որ և իր հերթին հեշտացնում էր տերերի հետ գործ ունենալը: Բացի տեղական մարմիններից, գոյություն ունեին նաև տրեդյունիոնների միությունների ֆեդերացիաներ, որոնք միացնում էին առանձին տրեդյունիոններին իրար արտադրական հիմունքներով, չունենալով, սակայն, լայն ֆունկցիաներ: Վերջապես 1868 թվից, հնարավոր եղավ հրավիրել այսպես կոչված տրեդյունիոնների կոնգրեսը, որը սովորաբար քննարկում էր միայն շարժման ընդհանրության վերաբերող խնդիրներ:

Տրեդյունիոնիստական կազմակերպությունների այս ձևը լիովին համապատասխանում էր համաձայնողականության քաղաքականությանը, վորը քարոզում էր, թե չպետք է սեղմել բանվորների և ձեռնարկությունների միջև պայմանագրեր կնքելու ազատությունը, դեմ լինելով պետության կողմից արվող վորևէ միջամտության, փաստորեն նպաստելով շահագործողներին: Անգլիական բանվորական շարժման բարեմիտ ղեկավարները խաղաղ պայքարի դեմ չեյին անշուշտ, նրանք վախենում եյին միայն շարտիստական բնույթի քաղաքական պայքարից: Նմանօրինակ դիրքը շատ էր սազում նրանց գաղափարախոսության պահպանողականությանը:

Յերբ 1867 թվականին յերկարատև պայքարից հետո պարլամենտական նոր ռեֆորմը բանվորական վերնաշերտին ընտրական իրավունքներ ընձեռեց, այդ բանը վոչ մի լուրջ փոփոխություն չառաջացրեց Անգլիայի հասարակական կյանքում: Ձայնի իրավունք ունեցող բանվորները չունենալով կազմակերպված կուսակցություն, իրենց ձայնը տալիս եյին բուրժուազիային, պոչ դառնալով մերթ պահպանողականներին, մերթ լիբերալներին, իրենց շահերի ակնկալությունը վերջիններից սպասելով: Այս ճանապարհով միայն պայքարելով անգլիական բանվորները մեծ դժվարությամբ և դանդաղությամբ ձեռք եյին բերում մի շարք իրավունքներ, ինչպես քրեյական այն օրենքների վերացումը, վորն ուղղված էր բանվորական կազմակերպությունների գործունեյության դեմ (ինչպես 1675 թվի դեկրետը) և այլն:

**Նոր տրեդյունիոնիզմ**.—Անգլիայի բարգավաճ դրությունը, սակայն, յերկար չշարունակվեց: Անգլիական բուրժուազիայի մենաշնորհյալ դրությունը համաշխարհային շուկայում խախտվեց, և 80-ական թվականների սկզբից արդեն անգլիական հեգեմոնիան լուրջ հարված ստացավ: Այս հարվածն ամենից առաջ հասավ նրան յեվրոպական կոնտինենտում արագորեն զարգացող նախկին հետամնաց գերմանական նոր կայսրության կողմից, իսկ Անդրօվկիանոսյան յերկրներից նրան սպառնում էր Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների նոր ծագած արդյունաբերությունը: Անգլիացի կապիտալիստը, վոր հենված էր մենաշնորհյալ դիրքին, շատ քիչ էր ուշադրություն դարձնում իր արդյունաբերության ներքին սարքավորման և տեխնիկական միջոցների զարգացման վրա և բավական յերկար ժամանակ հաշվի չէր առնում մյուս յերկրներին, այս անգամ ստիպված էր լուրջ կերպով հաշվի նստել տեխնիկական կատարելագործված միջոցներով զինված մրցակիցների հետ, հարմարվել արդեն շուկայի պահանջներին, գնողի ցանկություններին և ճաշակներին: Իսկ անգլիական արդյունաբերությունն այս բանի համար զինված չէր: Բավական է ասել, վոր յերկաթի արդյունաբերության մեջ 1860 թվին հարկ յեղավ 1500 պուդլինգյան վառարաններ վոչնչացնել, իսկ մնացած 300-ը վերափոխել և այս միայն մի շրջանում: Տեխնիկական վերափոխումներ կատարելու համար Անգլիան ստիպված էր վար դնել մեկ անգամից հսկայական գումարներ և մեծ մասամբ դեն շպրտել հին կառուցվածքներ, իսկ այս հնարավորությունը նա ըստ ամենայնի չուներ: Կրճատվեց նաև նավատորմի փոխադրության չափը, վորովհետև ուրիշ յերկրներ յերևան յեկան, խախտվեց նրա դարավոր միջնորդական առևտուրը: Այս բոլորի հետևանքով պակասեց անգլիական բուրժուազիայի շահույթը և նա հարկադրված յեղավ մրցակցական պայքարում մնալու համար արդյունաբերության մեջ հսկայական ներդրումներ կատարել: Նման պայմաններում, ինչպես այդ հատուկ է կապիտալիստական սիստեմին, բուրժուազիան գրոհի



անցավ բանվոր դասակարգի դեմ, ուժեղացնելով շահագործման ճնշումը: Անգլիայի խախտված հավասարակշռությունը չէր կարող իր անդրադարձումը չունենալ: Մրցակցական այս պայքարին զոհաբերվող բանվորական հոծ մասսաները շարժվեցին, թարմ հոսանք մտավ արհեստակցական շարժման մեջ, անտարբերությունն անցավ և ծայր առավ գործադուլային շարժում, վորոնք մի քանի կետերում վերածվեցին վոստիկանության հետ ունեցած ընդհարման և վերջացան տերերի ստացվածքի ավերումով: Այսպես, օրինակ, 1887 թվին Ստաֆֆորդշիրի գործադուլի ժամանակ, վորին մասնակցում եյին 20.000-ից ավելի բանվորներ, ջախջախեցին մեքենաները և մետաղահալ վառարանները, իսկ Լանկաշիրում բռնկված գործադուլը 70.000 բամբակագործական բանվորների մասնակցությամբ իսկական խռովության վերածվեց, վորի կապակցությամբ 68 գործադուլավորներ տաժանակրության դատապարտվեցին: Այնուհետև Լեյստերում (1886 թվին) բռնկվեց դուլպայագործների, 1887 թվին ածխահատների, 1889 թվին նավաշինարանների (դոկերի գործադուլը Լոնդոնում, վորին մասնակցում եյին 100.000 բանվորներ և հենց այս շրջանում, շարժումը հասավ իր զարգացման գագաթնակետին, ընդգրկելով լայն հոսանքով վոչ վորակյալ բանվորների: Գործադուլային այս հսկա ալիքը և բանվորների վերընթաց այս շարժումը 200.000-ից ավելի նոր բանվորներ մղեց տրեդյունիոնների շարքերը: Այս թարմ հոսանքի ազդեցության տակ համաձայնողական քաղաքականությունը նոր ճեղքվածքներ տվավ և շարժման ուղղությունը թեքեց դեպի ակտիվ տնտեսական-քաղաքական պայքարը: Մի շարք միություններ առանձին բանաձևերով հանդես յեկան միությունների մարտական բնույթը պահպանելու լոզունգի տակ, ինչպես յերկաթուղայինների միությունը 1890 թվի իր ընդունած բանաձևով լրջորեն դնում էր սոց. ապահովագրության կարգով արվող աշխատանքի ծանրաբեռնությունը թեթևացնելու և լուրջ տնտեսական և քաղաքական խնդիրներով զբաղվելու հարցը:

Խոշոր փոփոխության յենթարկվեց նաև միությունների կանոնադրությունը, վերացվեց բարձր անդամավճարը, ընդունելության հետ կապված բոլոր ձևականությունները, և տրեդյունիոնները դարձան իրոք մասսայական կազմակերպություններ: Տրեդյունիոնիզմի մեջ առաջ յեկած այս նոր հոսանքն իր անմիջական ազդեցությունն ունեցավ հին միությունների վրա: Այս միությունների ներսում կազմակերպվեցին ոպպոզիցիոն հոսանքներ, վորոնց ճնշման տակ հին տրեդյունիոններն ստիպված եյին հրաժարվել մի շարք կետերից և դռները բաց անել անվորակ բանվորների առաջ, զբաղվել տնտեսական և քաղաքական ավելի լուրջ խնդիրներով: Առաջ յեկան միությունների նոր ֆեդերացիաներ և այս ճանապարհով մրցող միությունների միջև միացման համար լայն հնարավորություններ ստեղծվեցին:

Սակայն սկսված շարժումն ի վիճակի չեղավ արմատապես փոխել անգլիական հին տրեդյունիոնիզմի հիմնական սկզբունքները: Տնտեսական ճգնաժամը և այն դեպրեսիան, վոր ապրեց Անգլիան 70—80-ական թվականների շրջանում, «գների իսկական հեղափոխություն առաջ բերեց» և այդ կանգ առավ միայն 90-ական թվականներին: Գների մակարդակի զգալի անկման հետևանքով բարձրացավ ռեալ աշխատավարձը և այս պայմաններում բանվորական շարժման ալիքն իջավ և գործադուլային շարժումը կանգ առավ: Այս դրությունը շարունակվեց մինչև 1910 թվականը, յերբ աշխատավարձն սկսեց սուր կերպով իջնել և յերկիրն ապրեց ավելի բարձր վե-

բուլքի մի շրջան։ 90-ական թվականներից մինչև 1910 թիվն ընկնող ժամանակաշրջանում Անգլիայի բանվորական շարժման տիրապետող գաղափարախոսությունը դարձավ նորից համաձայնողականությունը, մի քանի քայլ նույնիսկ ավելի առած, քան մինչև 80-ական թվականները։

## ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԱ ՅԵՎ ՍՈՑ. ԽՄԲԱԿՆԵՐԸ

### 1. Քաղաքական կուսակցությունների կազմակերպումը

Չարտիստական շարժման պարտությունից հետո ինքնուրույն քաղաքական կուսակցություն ունենալու բոլոր փորձերը, վորոնք արվեցին չարտիզմի հեղափոխական սերնդի ներկայացուցիչների կողմից, անհաջողությամբ վերջացան, դեմ առնելով համաձայնողականության ամուր պատին։ Այս պայմաններում, ինչպես ասացինք, բանվորական շարժումն ընթանում եր բուրժուազիայի պոչից—մինչև 90-ական թվականների բեկումը, վոր հատկանշական ե նաև քաղաքական ձգտումների աշխուժության տեսակետից։ Պարլամենտական պայքարի մեջ հանդես յեկող բանվոր թեկնածուներ մեծ մասամբ ձայների աննշան մեծամասնություն եյին ստանում, իսկ փոքր մասը պարլամենտում ընտրվելուց հետո չեր կարողանում կազմակերպել առանձին ֆրակցիա։ Չուներ վոչ առանձին ծրագիր և վոչ ել կանոնադրություն։

Վերջին տասնամյակում տեղի ունեցող իրադարձությունները չեյին կարող իրենց անմիջական քաղաքական արձագանքը չգտնել։ Յեվ իրոք մենք տեսնում ենք, վոր սկիզբ ե առնում սոցիալիստական մտքի պրոպագանդայի մի լայն շրջան և իրար յետևից կազմակերպվում են սոցիալիստական մի շարք խմբակներ։

Բանվորական կուսակցությունը կազմավորվեց տրեդյունիոնների կազմակերպությունների քաղաքական ներկայացուցիչներից և ինտելիգենցիայի և բանվորական շերտերից կազմված սոցիալիստական խմբակների ներկայացուցիչներից։ Սկսած 60-ական թվականներից մինչև անցյալ դարի վերջը բանվորական շարժումը ղեկավարվում եր տրեդյունիոնների կողմից, վորոնք գնում եյին լիբերալ բուրժուազիայի պոչից։ Ինչպես ասվեց՝ մոնոպոլ հզորության հասած բուրժուական գաղութների շահագործումից ստացած հսկայական հարստությունից մի մաս շպրտեց անգլիական վորակյալ բանվորական վերնախավի ձեռքը և սրանց դրությունը յեվրոպական ցամաքի մյուս յերկրների բանվորների նյութական դրության հետ համեմատած հարաբերական շատ լավացավ, այսպիսով բանվորության այդ վերնախավը բուրժուականացավ և, ինչպես Ենգելսն ե նկատում Մարքսին գրած իր նամակում, «գնալով անգլիական պրոլետարիատը բուրժուականանում ե, այնպես վոր բոլոր ազգերից այս ամենից բուրժուականը, ցանկանում ե գործն այնտեղ հասցնել, վորպեսզի ունենա բուրժուական արիստոկրատիա և բուրժուական պրոլետարիատ՝ բուրժուազիայի կողքին»։ Հանուն բանվորական ներկայացուցչության հանդես յեկող կազմակերպությունները (Լոնդոնի բանվորական ընկերությունը 1860—68 թ. թ., Բանվոր ներկայացուցիչների Լիգան 1869—80 թ. թ., Բանվորների ընտրական ասոցիացիան 1886—95 և ուրիշներ) սկզբնական շրջանում իրենց գործունեությունը չտարան այն ուղղությամբ, վորպեսզի բանվոր ներկայացուցիչները հանդես գան բանվոր դասակարգի առանձին պահանջներով, իսկ լիբերալ բուրժուազիայի դրոշի



ներքո հանդես յեկող բանվորական ներկայացուցիչներն ամենից քիչ եյին կողմնակից դասակարգային շեշտված քաղաքականության. պրոֆեսիոնալ կազմակերպությունների գծով քաղաքականության չխառնվելը դարձել եր արդեն ակսիոմա։ Յերկարատև ներքին պայքարից հետո տրեդյունիոնների 1871—72 թվերի կոնգրեսն ընդունեց մի բանաձև պարլամենտում բանվորական առանձին ներկայացուցիչներ ունենալու մասին։ Վերջապես 1874 թվին Բանվորական ներկայացուցչության Լիգան ունեցավ իր առաջին հաջողությունը. պարլամենտի անդամներ ընտրվեցին, ածխարդյունաբերության շրջաններից յերկու ներկայացուցիչներ։ 1886 թվին տրեդյունիոն. կոնգրեսն առաջադրեց բանվորական ընտրական կոմիտե ունենալու խնդիրը, վորը պետք ե հսկեր և ի մի բերեր բանվոր դասակարգի ոգտին արվող բոլոր առաջարկները և գաղափարները։ Կոմիտեն իր ծախքերը հոգում եր և ընտրական պայքարին մասնակցում տրեդյունիոնների կասսայից տրված ոգնությամբ։ Հենց նույն տարին Կոմիտեն վերածվեց արդեն ինքնուրույն կազմակերպության, այն ե՝ Բանվոր ընտրողների ասոցիացիայի։ Չնայած ասոցիացիան պաշտպանում եր միայն բանվորական թեկնածուներին, սակայն նրա տակտիկան համընթանում եր լիբերալներին և գնում եր նրանց պաշտպանության ներքո. միաժամանակ հրաժարվելով աշխատակցել սոցիալիստական կազմակերպությունների (Սոցիալ-դեմոկրատական ֆեդերացիա) հետ։

Սոցիալ-դեմոկրատական ֆեդերացիա.—1881 թվին Հայնդմանի ղեկավարությամբ հիմնադրվեց Դեմոկրատական ֆեդերացիան, վոր անց մի քանի տարի (1884 թ.) վերանվանվեց Սոցիալ-դեմոկրատական ֆեդերացիա։ Ֆեդերացիան դավանում եր մարքսիզմի ուժեղ ազդեցության ներքո և կազմված եր դեպի լիբերալիզմը խիստ քննադատական վերաբերմունք ունեցող ինտելիգենցիայի մի փոքրաթիվ խմբակից, վորոնք չարտիզմի տրադիցիաները կապում եյին մարքսիզմի և ոենիզմի հետ, համարելով իրենց այդ տրադիցիաների կրողը։ Իր գոյության ընթացքում ամբողջ 15 տարի նա պայքար վարեց պարլամենտ անցկացնելու իսկական սոցիալիստ պատգամավորների։

Առաջին շրջանում ֆեդերացիան իրեն հեռու յեր պահում տրեդյունիոններից, իբրև համաձայնողական տակտիկա կիրառողներից, սակայն 1896 թ. նա փոխում ե իր դիրքը և ընդունում մի բանաձև տրեդյունիոններին միանալու և ոգտագործելու այնտեղ համախմբված բանվորությանն՝ իբրև բանվորական շարժման լավագույն տարրեր սոցիալիզմի պրոպագանդ մղելու համար, իսկ 1902 թվին ֆեդերացիան իր անդամներին առաջարկում ե ակտիվ պայքար մղել տրեդյունիոնների շարքերում և նրանց հետ միանալ։ Սոց.-դեմոկրատական ֆեդերացիայի կողքին գործում եր նաև Ֆաբիանական ընկերությունը, հիմնված 1884 թվին սոցիալիզմի պրոպագանդի նպատակով։ Այս ընկերությունը կազմված եր ինտելիգենտների խմբակից, ուր մտնում եյին գիտնական անձինք, գրականագետներ, պարլամենտի անդամներ և այլն։ Ֆաբիանական ընկերությունը հենց իր կազմակերպության որից իսկ հանդիսանում եր հակամարքսիստական մի կազմակերպություն, վորը չեր ընդունում դասակարգային պայքարի անհրաժեշտությունը և կողմնակից եր կապիտալիզմը ռեֆորմներով շտկելու գաղափարին։

Սոց.-դեմոկրատական ֆեդերացիան զբաղվելով հիմնականում իր գլխավոր նպատակի, այն ե՝ սոցիալիստական հասարակարգի ստեղծման պրոպագանդով, անտեսում եր և թռչում բանվորների տնտեսական խնդիրների և ամենօրյա հրատապ և այրող հարցերի վրայով, ինչպես բանվորական օրվա տևողու-

թյան, բանվորների պետական ապահովագրման, գիշերային աշխատանքի, անուղղակի հարկերի և այլ մի ամբողջ շարք հարցերի վրայով, այսպիսով կտրելով իրեն լայն մասսաներից: Այս հանգամանքը իր խոր կնիքը դրեց նրա բոլոր աշխատանքների վրա: Այնպես վոր յերբ Ֆեդերացիան խոշոր բեկումից և մի շարք ճեղքվածքներից հետո 1912 թվին վերակազմվեց իբրև Բրիտանական սոցիալիստական կուսակցություն, յերբ ավելի լայն հնարավորություններ կային կազմակերպված քաղաքական աշխատանքի համար, բնավ սակայն չհաջողվեց նրան դառնալ մասսայական և կենդանի գործով զբաղվող կուսակցություն: Նա մնաց մի տեսակ աղանդավորական վիճակի մեջ: Սրան նպաստում էր վոչ միայն վերջիններիս կիրառած սխալ տակտիկան, իսկ յերբեմն ուղղակի անթույլատրելի քայլերը,—ինչպես պարլամենտական ընտրությունների ժամանակ լիբերալների դեմ կռվելու համար ավելի ռեակցիոն պահպանողականների հետ միանալը,—այլև այն հետադարձ շարժումը, վոր կատարվեց ութսունական թվականների վերելքից հետո հանդեպ համաձայնողականության, վորը նորից գերիշխող դարձավ տրեդ-յունիոնների մոտ: Սոց.-դեմ. ֆեդերացիայի տակտիկական սխալ քայլերից մեկն էլ այն էր, վոր նա իր ջերմոցային և ժամանակից ու պատմական զարգացման օրենքներից կտրված ծրագիրն ու քաղաքականությունը փորձեց փաթաթել տրեդ-յունիոնների վզին, այն ժամանակ, յերբ վերջիններս իրենց ամբողջ գործունեությունը հիմնել էին տնտեսական խնդիրների խաղաղ լուծման և համաձայնողականության տակտիկայի վրա: Ինչ խոսք, վոր այդ ձևով կուսակցությունը զրկում էր իրեն բանվոր դասակարգի քաղաքական ավանգարդ լինելու հնարավորություններից, դատապարտելով իրեն սոցիալիստական աղանդի վիճակի անգլիական բանվորական շարժման ներսում»:

## ԱՆԿԱԽ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՋ ԳԱԼԸ

Յեթե Սոց.-դեմոկրատական ֆեդերացիան իր գործունեության ընթացքում փորձում էր հենվել գլխավորապես անվորակ բանվորական մասսաների վրա և իր կոչերով սերում էր ինտելիգենցիայից, ընդհակառակը նոր կազմակերպված Անկախ բանվորական կուսակցությունը իր սոց-հենարանով անգլ. բանվորական արիստոկրատիայի կազմակերպությունն էր և հենվում էր հատկապես տրեդ-յունիոնների վրա: Ի հակադրություն սոց.-դեմոկրատիայի վորդեգրած տակտիկայի և գործունեության, Անկախ բանվորական կուսակցությունը նպատակ դնելով պրոլետարական ինքնուրույն քաղաքականություն վարել, փաստորեն իր ուշադրությունը կենտրոնացրեց գլխավորապես բանվորների մասնակի խնդիրների վրա, մի կողմ նետելով սոցիալիզմը և միայն հարևանցիորեն իրեն հայտարարելով սոցիալիստական կուսակցություն: Ինչպես պետք էր յենթադրել, կուսակցության քաղաքական գործունեության առանցքը և իր նպատակներն իրագործելու միջոցը դարձավ պարլամենտական գործունեությունը, վորպիսի դերը, պետք է ասել, նա «պատվով» կատարեց և շարունակում է կատարել մինչև օրս:

Այս կուսակցությունը կազմվեց Շոտլանդիայում 1889 թվին, այնուհետև կարճ ժամանակից հետո շարժումն ընդգրկեց Անգլիայի խոշորագույն շրջանների տրեդ-յունիոնները և վերջնականապես «Անկախ բանվորական կուսակցություն» անունը ստացավ Բրեդֆորդի կոնֆերանսում:

Նոր կուսակցությունը նպատակ ուներ, ինչպես ասվեց, ինքնուրույնվել և լի-



բերալ բուրժուազիայից և Սոց.-դեմոկրատական ֆեդերացիայից և անկախ քաղաքականություն վարել:

Սակայն, ինչպես չափազանց սրամիտ կերպով է նկատում Վ. Լենինը, այս կուսակցությունը իրականում «սոցիալիզմից անկախ էր, լիբերալիզմից կախված», վորովհետև ինչպես կուսակցության ծրագիրը, նույնպես տակտիկան հիմնականում մոտենում էր տրեդ-յունիոնների հայտնի համաձայնողականությանը:

Պարլամենտական հետագա ընտրություններին անկախ բանվորական կուսակցությունը կարողանում էր իրոք վոր լիովին կիրառել իր համաձայնողական տակտիկան: Անկախ բանվորական կուսակցության ծրագրում իբրև սոցիալիզմի ձգտող կետեր գրված էին՝ 1) արդյունաբերական հանրապետություն, հիմնված հողի և կապիտալի համայնացման վրա, 2) իբրև դրա միջոց՝ հասարակության դաստիարակություն սոցիալիզմի սկզբունքներով, 3) բանվորների արհեստակցական և քաղաքական կազմակերպություն, 4) սոցիալիստական սկզբունքների անկախ ներկայացուցչություն բոլոր ընտրովի հիմնարկություններում:

Այնուհետև իբրև այդ նպատակի համար միջոցներ՝ ծրագիրը պահանջում էր ութժամյա բանվորական օր, շաբաթական 6 օրվա աշխատանք, պահպանելով բոլոր գոյություն ունեցող տոները և Մայիսի 1-ը օրենքով տոն հաստատելով: Արդյունավետ տնտեսական-արդյունաբերական ձեռնարկությունների հիմնում բանվորներին աշխատանք տալու համար. կենսաթոշակ 50 տարեկանից ավելի հասակ ունեցող բանվորներին. ազատ աշխարհիկ տարրական, միջնակարգ և բարձրագույն կրթություն, ձրի ապրուստով դպրոցում և համալսարանում. անուղղակի հարկերի վերացումն և հարկադրության ամբողջ ծանրությունը հետզհետե անաշխատ յեկամուտների վրա դցելը՝ այն վերջնականապես վոչնչացնելու նպատակով:

Պարլամենտական բանվորական կուսակցության առաջ գալը.—Անկախ պարլամենտական ներկայացուցչության ոգտին սկսված շարժումն ի վերջո հանգեց «բանվորների ներկայացուցչական կոմիտեյի» ստեղծման: 1906 թ. ընտրություններին տրված էին 50 թեկնածուներ, վորոնցից անցան 29 թեկնածուներ, վորոնք պարլամենտում կազմեցին առանձին խմբակ: Նույն թվին պարլամենտի բանվորական ներկայացուցչության կոմիտեն ընդունեց Պարլամենտական բանվորական կուսակցության անունը: Լիբերալները հակված էին նոր կազմվող կուսակցության վրա նայել վորպես լիբերալ մեծամասնության կցորդի: Սակայն ստիպված էին հաշվի առնել նրա «մրցունակությունը» բանվորական մասսաները իր կողմը գրավելու խնդրում:

1906–10 թիվը բանվորական կուսակցությունը ներկայացնում էր իրանից վոչ ավել, քան «առաջին քայլը» իսկական, գիտակցված բանվորական կազմակերպության, դեպի սոցիալիստական բանվոր կուսակցությունը» (Լենին):

Բանվորական կուսակցությունը միացնում էր իր մեջ համարյա բոլոր տրեդ-յունիոնիստական կազմակերպությունները և ֆինանսավորում էր վերջիններիս նյութական միջոցներով, վոր զգալի կերպով ամրացնում էր վերջինիս:

Բանվորական կուսակցությունը միաժամանակ յուրատեսակ մի ապարատ էր բանվոր թեկնածուներ պարլամենտ անցկացնելու:

Այս կուսակցության հետ միասին անհատապես չէր տեղի ունենում: Կուսակցության մեջ պետք է մտնեն կազմակերպություններով: Մուտքը կուսակցության մեջ հնարավոր է այն բոլոր կազմակերպությունների համար, սկսած սոցիալիստներով, վերջացրած Փաբիականներով և լիբերալներով, վորոնք այն հայացքն ունեն, թե «բանվորները պարլամենտում այնպիսի մարդկանցով պետք է ներկայացված լինեն, վորոնք համակրում են բանվորական շարժման նպատակներն ու պահանջները»: Ահա ինչու բանվորական կոչվող այս կազմակերպությունը չի տարբերվում լիբերալներից:

1914–18 թվերի պատերազմների շրջանում և նրանից հետո կուսակցությունը բռնվեց թունոտ շովինիզմով և անցավ սոցիալ-հայրենասիրության դիրքերը, մտավ կառավարական կոալիցիայի մեջ և նրա յերկու անդամները՝ Հենդերսոնը և Բրեյսը ստացան մինիստրական պորտֆելներ: Անկախ բանվոր կուսակցությունը և պարլամենտական կուսակցության փոքրամասնությունը գլխավորությամբ Մակդոնալդի բուրժուական խաղաղասիրության փողով դուրս յեկավ և հրաժարվեց մասնակցել միջազգային հեղափոխական սոց-դեմոկրատիայի ցիմմերվալդյան և կինտալյան խորհրդակցություններին: 1918 թվին բանվոր կուսակցության կանոնադրությունը փոփոխվեց: Կուսակցության մեջ կազմակերպությունների հետ միասին թույլատրվեց մտնել նաև առանձին մարդկանց, վորից հետագայում ոգտվեցին լիբերալ բանակից շատ շատերը: Նույն տարում ընդունվեց բանվոր կուսակցության նոր «սոցիալիստական» ծրագիր, վոր կազմված է պատերազմի ընթացքում ձախացած Փաբիականների ազդեցության տակ և մասնակի փոփոխություններով ներկայացնում է կուսակցության արդի ծրագիրը:

Բանվորական կուսակցության անդամների թիվը 1990, 1901 և 1902–ին կազմում եր 376.000, 1905–1910–ին դառնում է 1,430.000, 1915 թվին 2,093 հազար, 1920 թվին 4,360,000: Իսկ 1925 թվին քանակը իջավ 3,200,000–ի: Չնայած իր անդամների փոքր քանակին (ամենից շատը 30, 50,000):

Անկախ բանվորական կուսակցությունն է փաստորեն ղեկավարում բանվորական կուսակցության և տալիս բրիտանական իմպերիայի արդի ականավոր ղեկավարներ:

Անկախ բանվորական կուսակցությունը 1920 թվին հեռանալով 2–րդ Ինտերնացիոնալից, վորոշեց կապ ստեղծել Կոմինտերնի հետ, բայց չընդունելով առաջարկված 21–պայմանները, փորձեց կազմակերպել Վիեննայի 2½ Ինտերնացիոնալը: Վերջինիս անկումից հետո նորից վերադարձավ իր մոր գիրկը՝ 2–րդ Ինտերնացիոնալը: Թե Ա. Բ. Կ. ո թե բանվորական կուսակցությունը շարունակում են ապրել ներքին կրիզիսներ և տարուբերվում աջ-ձախ հոսանքների մեջ, վորից աջերի մի խմբակ 1927 թվին հեռացավ Սնոուդենի գլխավորությամբ:

1911 թվին Մանչեստրում գումարվեց սոցիալիստական շարժման միավորիչ կոնֆերանսը, վորի հետևանքով կազմվեց Բրիտանական սոցիալիստական կուսակցությունը, վորի մեջ մտան Սոց.-դեմոկրատական ֆեդերացիան, անկախների և բանվորականների մի մասը, Փաբիականները և Կլարիոնի խմբակը:

Այս կուսակցությունը համաշխարհային պատերազմի ժամանակ ապրեց ներքին կրիզիս, մեծամասնությունը դեմ դուրս յեկավ սոցիալ-պատրիո-



րից»:—1924 թվից սկսյալ Կոմկուսն սկսեց դանդաղ, բայց հաստատուն կեր-կուսակցության շարքերից, ազատելու իրեն նրանց «քայքայիչ աշխատան-պով կազդուրվել և չոկել իրեն: Յերբ 1924 թվին «Զինովյևի նամակի» հայտնի պատմության կապակցությամբ, պահպանողականների կուսակցությունը Բոլդվինի ղեկավարությամբ պրովոկացիայի մթնոլորտում անցավ կառավարության գլուխ, Կոմկուսը ծայր առնող ռեակցիայի պայմաններում վոչ միայն յետ չգնաց, այլ աճեց նրա ազդեցությունը, վորին բուրժուազիան պատասխանեց կատաղի հարձակումով, ձերբակալեց կուսակցության ղեկավարներին և դատի հանձնեց: Սակայն այս ամենի հետևանքը յեղավ կուսակցության անդամների աճումը:

Այս նույն ժամանակաշրջանում Լիվերպուլի կոնգրեսում ռեֆորմիստները ձեվակերպեցին Կոմկուսին պատկանող անդամներին դուրս հանելու խնդիրը բանվորակ. կուսակցությունից: Այս վորոշումը բողոք առաջացրեց ձախ տրամադրված բանվորական խմբակների մեջ: Փոխանցման այս շրջանում կուսակցությունը հանդես յեկավ ներքին ամրությամբ, գլուխ չկորցնելով բուրժուազիայի ռեպրեսիաների առաջ: Կիսալեգալ վիճակում յեղող Կոմկուսն աճեց ու ավելի քան սպառազինվեց բռնելով արդեն բոլշեվիզացիայի ճանապարհը, վորը վերջնականապես կյանքի մեջ մտավ 1925 թվի Մանչեստրի համագումարից հետո:

Բրիտանական Կոմկուսը շնորհիվ գյուղացիական մասսաների բացակայության, հանդիսանում է համարյա ամբողջությամբ բանվորական կուսակցություն, մանավանդ կուսակցության ներսում յեղած ոպոզիցիոն հոսանքների հաղթահարումից հետո: Կոփված կուսակցությունն իր հետագա գործունեության ընթացքում կարողացավ դասակարգային կատաղի պայքարի բովում 1926 թվի գործադուլի, Չինաստանում կատարվող զինվորական եքսպեդիցիայի—անգլո-խորհրդային հարաբերությունների խզման, միասնական ֆրոնտի, պատերազմի և գաղութների շահագործման դեմ տարվող պայքարի պայմաններում իր քննությունը բռնել: Անգլիայում միայն Կոմկուսն է վերապահված անգլիական պրոլետարիատի և Բրիտանական կայսրության լծի տակ հեծող աշխատավորության վերջնական ազատագրումը, կապիտալիզմի փոխարինումը սոցիալիզմով:

## ԹԵՄԱՆԵՐ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Մոնոպոլիստական կապիտալիզմի ազդեցությունը Անգլիայի բանվորական շարժման վրա:

Գրականություն.—Լենին, Իմպերիալիզմն իբրև կապիտալիզմի նորագույն էտապ, գլուխ 8-րդ:

2. Վորո՞նք են անգլիական բանշարժման և տրեդյունիոնիզմի բնորոշ գծերը:

Գրականություն.—Լենին, Ի՞նչ անել, գլուխ 3-րդ (Բանվոր դասակարգն իբրև առաջավոր մարտիկ հանուն դեմոկրատիայի):

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԽՍՀ—Арм.ССР

ախմբին, իսկ փոքրամասնությունը Հեյզմանի ղեկավարությամբ 1916 թվին հեռացավ և ստեղծեց Նացիոնալ սոց. կուսակցություն, որը 1921 թվին վերականգնեց իր նախկին անունը՝ Սոց.-դեմոկրատական ֆեդերացիա, որն այժմ գրավում է աջ դիրքը և ակտիվ հակախորհրդային պայքար է վարում: Սակայն այս հոսանքը բանվորական մասսաների մեջ վոչ մի համակրանք չունի:

Բրիտանական սոց. կուսակցության հիմնական մասը, ընդհակառակը, մոտեցավ միջազգային հեղափոխական սոց.-դեմոկրատիային, համերաշխվեց Հոկտեմբերյան հեղափոխության հետ և վորպես հիմնական մաս 1920 թվին մտավ կազմակերպված Մեծ-բրիտանական Կոմկուսի մեջ:

Բանվորական կուսակցության ծրագիրը իր առաջ դնում է հետևյալ պահանջները, վորոնք մնում են իրենց ուժի մեջ մինչև օրս. 1) դեմոկրատիկ կոնտրոլ արտադրության վրա, 2) էներգիայի, տրանսպորտի միջոցների ազգայնացում, 3) բանկերի ազգայնացում, 4) տեղական կառավարման օրգանների ապակենտրոնացում, 5) հարկ կապիտալի վրա, ազգային պարտքերը մաքրելու համար, 6) յոթժամյա բանվորական օր լեռնագործների և 8-ժամյա՝ մնացած բանվորական խմբերի համար. 7) բնակարանային օրենսդրության բարեկարգություն և բանվորական շենքերի կառուցում, 8) ֆաբրիկա-գործարանային օրենսդրության և գործազուրկների սոց. ապահովագրման բարելավում, 9) խաղաղասիրական արտաքին քաղաքականություն, հիմնված ազգերի իսկական դաշնակցության վրա: Այս պահանջներին հետագա տարիներին ավելացվեց՝ ա) հողային սեփականության հարկադրումը, վորը վերջնականում նպատակ պետք է ունենա հողի ազգայնացումը. բ) ածխային արդյունաբերության ազգայնացում. գ) ԽՍՀՄ-ի ճանաչումն ու նորմալ դիվանագիտական և առևտրական հարաբերությունների ստեղծելը. դ) բանակցությունների վարումը Չինաստանի հետ, վորպես ինքնուրույն պետության հետ անհավասար դաշնագրերի առթիվ ե,) աշխատավարձի մինիմումի սահմանումը. զ) Եգիպտոսի պետական անկախության վերապահելն և Հնդկաստանին դոմինիոնի իրավունք տալը:

Սակայն իրական կյանքը գնաց և գնում է առաջադրված ծրագրին միանգամայն հակառակ: Կուսակցությունը բնավ չկարողացավ չիտակ և ճշտորոշված տեսական ճակատ մշակել և շարունակեց կառչած մնալ լիբերալ քաղաքականության: Գործին բնավ չօգնեց նաև բանվորական կուսակցության հաղթանակն ընտրություններին և բանվորական կուսակցության կառավարության գլուխ անցնելը Մակդոնալդի գլխավորությամբ: Ընդհակառակը լիբերալների օգնությամբ 2 տարի իշխանության գլուխ կանգնած «բանվորակ. կառավարությունը» շարունակեց վերջիններիս քաղաքականությունը ինչպես ներքին, նույնպես և արտաքին քաղաքականության ասպարեզում:

Այս երևույթն առանձնապես ակներև է դարձել բանվորական կուսակցության վերջին հաղթանակից հետո, երբ բախտը նորից ժպտաց նրան ու Մակդոնալդը նորից անցավ կառավարության գլուխ:

Հազիվ թե Անգլիայի հետպատերազմյան խախտված քաղաքական պայմաններում վորևէ կուսակցություն այնքան հ[illegible]անել բրիտանական իմպերիալիզմի շահերը, ինչպես [illegible]րե-[illegible]նում ներն Անգլիայի բանվ. կուսակցությունը: Այ[illegible]

ՀՀ Ազգային գրադարան
NL0405937

սկսված հեղափոխական շարժման անողոք ճնշումը, ընտրական խոստումներից լիապես հրաժարվելը, գործազրկության բանակի հսկայական աճումը, Գերմանիայի ստրկական շղթաների ամրացումը, վոչ բացորոշ դիրքը Խ.Ս.Հ.Մ.-ի հանդեպ, պայքարը անգլիական կոմկուսի դեմ և այլն, այդ են վկայում:

Ամենից հին և ամենից լավ կազմակերպված անգլիական բուրժուազիան իր պատմական զարգացման ընթացքում, դեռ բանվորական շարժման խանձարուրից դուրս կորզեց իր ապագա գործակալներին, բարելավեց բանվորական վերնախավի վիճակը, իր իդեոլոգիական ազդեցության տակ առավ բանվոր. շարժումը և այդպիսին ուղղեց համաձայնողականության փորձված ճանապարհով: Անգլիայի բանվորական կուսակցության ուղին հանդիսացավ գործնականում բրիտանական կապիտալիզմի ուղի և այժմ այդ ճանապարհի վրա անգլիական հեղափոխական պրոլետարիատը իր ավանգարդով ունի յերկու թշնամի, իր դասակարգային թշնամին—հանձինս բրիտ. իմպերիալիստական բուրժուազիայի և սոցիալ դավաճաններ—հանձինս բուրժուազիայի գիրկը գլորված ոպորտյունիստական բանվորական կուսակցության և բոլոր ռանգի այլ հոսանքների:

## ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Կոմկուսը կազմակերպվեց 1920 թվի ամռանը Բրիտանական սոց. կուսակցության նախաձեռնությամբ, վորն այս ժամանակաշրջանում ընդհուպ մոտեցավ Կոմինտերնին և ընդունեց վերջինիս ծրագիրը: Սոց. կուսակցությունն Անգլիայում գոյություն ուներ ավելի քան 20 տարի. ճիշտ է, սա վոչ մեծ, բայց կուռ մարքսիստական կազմակերպություն էր, վորը պատերազմի ժամանակ Մակ-Մանուսի, Բելի և Պոլի գլխավորությամբ խաղաց նշանավոր դեր Ֆաբրիկա-գործարանային ավագների շարժման կազմակերպության մեջ: Բացի սոց. կուսակցությունից, Լոնդոնում գործում էր Բանվորների սոց. Ֆեդերացիան, փոքրիկ, բայց գործունյա կանացի հեղափոխական մի խմբակ, վորը Հոկտեմբերյան հեղափոխության ազդեցությամբ փոխարկվեց քաղաքական սոցիալիստական կուսակցության: Յերկու կազմակերպություններն էլ տառապում եյին ուժեղ «ձախ» թեքումներից: Յերկարատեվ պայքարից հետո, կոմինտերնի կողմից հրավիրված համագումարում 1921 թ. հունվարին բանվորների Սոց. Ֆեդերացիան հրաժարվելով իր սխալներից, մտավ կոմկուսի մեջ: Կոմկուսի մեջ մտան նաև ֆաբրիկային ավագներ: Սակայն կուսակցությունը դեռ չուներ վոչ հիմնական ծրագիր և վոչ էլ կանոնադրություն, բացի կոմինտերնի 2-րդ կոնգրեսի տված վորոշումներից: Կուսակցության համար յեկան փորձության ծանր որեր, կապված գործազրկության հսկայական աճման և անգլիական կապիտալիզմի անկման և նրա ապրած սուր հակասությունների հետ: Այս պայմաններում կուսակցությունը յենթարկվում է հալածանքների, շատ անդամներ դուրս են գալիս: 1922 թվին հնարավոր յեղավ Բատերսի համագումարում անցկացնել Կոմինտերնի 3-րդ կոնգրեսի թեզիսները, վորոնք ընդունվեցին միաձայն և կուսակցությունը դարձավ այդ ժամանակից կոմինտերնի ուշադրության կենտրոնը:

1923 թվի պարլամենտական ընտրություններին Կոմկուսը պաշտպանեց բանվորական կուսակցության թեկնածուներին, մինչդեռ բանվոր. կուսակցությունն առաջադրություն էր մտցրել հեռացնել Կոմկուսը բանվորական